

ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՒՇԵՐԸ

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում
1914 թ. հուլիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը

Տեսք 2: 1915 թ. հունվարի 1-ից մինչև 1915 թ. մայիսի 12-ը*

Բանալի բառեր – Թովմաս Նազարբեկյան, Խոյ, Ֆ. Չեռ-
նոզուրով, Հակոբ Զավրիյան, Սբ. Բարդուղիմեոսի վանք,
Դերիկ, Դիլման, Մուխանջիկ, Երևան, Իզդիր, Սմբատ Բորո-
յան, Անդրանիկ, Արդուրբեզակ, Հակոբ Չոլոյան, Վան, Շա-
տախ, Վանի հայկական նահանգապետություն, Իշխան,
Արամ, Վարդան, Դրո, Համազասպ, Բերկրի:

Գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանի հուշերի երկրորդ տետրում ներկայացված են 1915 թ. հունվարի 1-ից մինչև մայիսի 12-ը Ադրբեջանական ջոկատի վարած մարտական գործողությունները՝ Պարսկաստան ներխուժած թուրքական զորքերի դեմ:

Իր նախորդ շարադրանքի հետ կապն ապահովելու համար գորավարը սկզբում վերադառնում է 1914 թ. դեկտեմբերյան անիմաստ ու աննպատակ նահանջի պատմությանը և ապա շարունակում է հետագա շարադրանքը:

Գեներալը տագնապով փաստում է, որ Ատրպատականը հեղեղված էր թուրքական լրտեսներով, որոնք չնայած ձեռնարկված խիստ միջոցներին, ունենալով տեղի մահմեդական բնակչության գործուն աջակցությունը, թափանցում էին Խոյ քաղաք և ձեռք բերում հետախուզական բնույթի տեղեկություններ: Պատերազմի սկզբնական շրջանում ռուսական հրամանատարությունը այնքան էլ շատ ուշադրություն չէր դարձնում հետախուզական և հակահետախուզական գործողություններին: Քանի որ ռուս-թուրքական ռազմաձևատր համարում էր երկրորդական, միայն 1915 թ. կեսերից հետո է սկսում ակտիվանալ բանակային հետախուզությունը:

1915 թ. հունվարին Ադրբեջանական ջոկատի հրամանատարությունը փորձեց հետ գրավել Հյուսիսային Պարսկաստանում կորցրած տարածքները, այդ թվում՝ Ատրպատականի կենտրոն Թավրիզը: Իր հերթին օսմանյան հրամանատարությունը արագորեն համալրում էր Սարիղամիշի ճակատամարտում ջախջախված իր 3-րդ բանակն ի հաշիվ նեղուցների շրջանում տեղակայված 1-ին և 2-րդ բանակների և այլ զորամասերի: 3-րդ բանակի հրամանատարն էր Մեհմեդ Քյամիլ փաշան, իսկ շտաբի պետը՝ գերմանացի

* Ընդունվել է տպագրության 20.05.2019:

մայր Ֆելիքս Գուզեն¹:

Օսմանյան հրամանատարությունը նախապատրաստվում էր մարտական գործողություններին՝ գործի դնելով տեղական ու խորքային հետախուզությունը: Թուրքերին մեծապես աջակցում էին դաշնակից գերմանացիները², որոնց հաջողվել էր պատերազմի նախօրեին՝ Կովկասի փոխարքայության կենտրոն Թիֆլիսում և Հյուսիսային Պարսկաստանում կազմակերպել լրտեսական մեծ ցանց, ընդգրկելով ռուսական ինքնակալությունից դժգոհ տեղացիներին³:

Ռուսական հրամանատարությունը չկարողացավ ժամանակին տեղեկանալ, որ 1915 թ. մարտին Գալիպոլիից Վանի նահանգ են տեղափոխվել Հալիլ բեյի Հավաքական 3-րդ (7-րդ, 9-րդ և 44-րդ հետևակային գնդեր) և Քյազիմ բեյի Հավաքական 5-րդ (37-րդ, 40-րդ և 43-րդ հետևակային գնդեր)⁴ դիվիզիաները: Հալիլ բեյի դիվիզիային միացել էին նաև ժանդարմական ու սահմանապահ ստորաբաժանումներ, որից հետո Հալիլի ուժերը կազմում էին 10-12 գումարտակ, 12 թնդանոթ ու մի քանի հազար քրդեր⁵: Մինչդեռ՝ ռուսական հրամանատարությունը ենթադրում էր, որ Սարիղամիշից հետո հակառակորդն ի գորու չի լինի լուրջ ուժեր տեղափոխել ռուսությունքական ռազմաճակատ, ուստի անհրաժեշտ է ժամանակն օգտագործել զորամասերին հանգիստ տալու համար: Փաստորեն ռուսները թերագնահատեցին թուրքերի հնարավորությունները, ինչը վերջիններիս թույլ տվեց ակտիվացնել մարտական գործողությունները Հյուսիսային Պարսկաստանում: Այդ հարձակումը նպատակ ուներ շեղել ռուսների ուշադրությունը Երզրումից:

1915 թ. հունվարի 1-ից մինչև մայիսի 12-ը ընկած ժամանակահատվածն ընդգրկող գեներալ Թ. Նազարբեկյանի հուշերի բովանդակությունից կարելի է առանձնացնել հետևյալ երեք առանցքային իրադարձությունները.

1. Դիլմանի ձակատամարտը,
2. Արարատյան գնդի կազմավորումը,
3. Վանի ինքնապաշտպանությունը և հայկական նահանգապետության հիմնումը:

1915 թ. ապրիլի 16-ին Հալիլ բեյը գրավում է Դիլմանը և նախապատրաստում նրա շրջակայքում եղած ռուսական զորքերի շրջապատումը և ջախջախումը: Օսմանյան հրամանատարությանը քաջ հայտնի էր Դիլմանի շրջանում տեղակայված ռուսական զորքերի սակավ թվաքանակի ու բանակած վայրերի մասին: Կարծում ենք, որ նման տեղեկատվություն հնարավոր

1 Տե՛ս **Корсун Н. Г.**, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны в 1915 году, Москва, 1940, էջ 21:

2 Տե՛ս **Пипия Г. В.**, Германский империализм в Закавказье в 1910-1918 гг., М., 1978, էջ 36, **Масловский Е. В.**, Мировая война на Кавказском фронте 1914-1917 г., էջ 154:

3 Թիֆլիսում և Քութայիսիում վրաց կամավորական դրոժինաներից ձևավորվում է վրացական հետևակային գումարտակը: Երբ Պրինոբսկյան ջոկատի (Կովկասյան I բանակային կորպուս) հրամանատար, գեներալ Վ. Պ. Լյախովի կողմից բացահայտվում է Բաթումի մարզի որոշ վրացիների կապը թուրքերի հետ, նպատակահարմար է գտնվում գումարտակը տեղափոխել Պարսկաստան՝ Ադրբեջանական ջոկատ, տե՛ս **Масловский Е. В.**, նշվ. աշխ., էջ 211:

4 Տե՛ս **Корсун Н. Г.**, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте, էջ 21:

5 Տե՛ս **Масловский. Е. В.**, նշվ. աշխ., էջ 155-156: Հալիլի մարտակազմը մոտ 20 հազար հոգի էր, տե՛ս **Корсун Н. Г.**, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте, էջ 22: Քյազիմ բեյի դիվիզիան չմասնակցեց Դիլմանի ձակատամարտին, քանի որ ուղղվեց Վանի հայության ինքնապաշտպանությունը ձեռնարկելու:

չէր ամբողջապես հայթայթել բացառապես ռազմաճակատային հետախուզությամբ: Ադրբեջանական ջոկատի տեղաբաշխման ու մարտակազմի վերաբերյալ սպառիչ և ամբողջական տեղեկություններ կային միայն Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի և Կովկասյան բանակի շտաբներում: Հ. Ջավրիյանի անտիպ հուշերից տեղեկանում ենք, որ 1916 թ. ամռանը Թիֆլիսում բացահայտվել է գերմանական հետախուզական կենտրոն, որի անդամներից էր փոխարքայի համհարզ Մենգեն⁶:

Դիլմանի ձակատամարտում ռուսական զինուժի հաղթանակի կարևոր գրավականներից մեկը Հայկական 1-ին խմբի ներկայությունն էր: Նրա վաշտը՝ Սմբատ Բորոյանի հրամանատարությամբ, Անդրանիկի հրամանով ձիշտ ժամանակին հասավ Դիլմանի մոտ գտնվող Մուխանջիկ գյուղը: Թ. Նազարբեկյանի կարգադրությամբ հայ կամավորները զբաղեցնում են պաշտպանական տեղամասի ամենակարևոր՝ կենտրոնական մասը: Գեներալը հրամայում է Ս. Բորոյանին ոչ մի դեպքում չնահանջել: Զորավարը հպարտությամբ փաստում է, որ հայ աշխարհագրայինները Սմբատի հրամանատարությամբ պատվով կատարեցին հրամանը: Ապրիլի 17-ին այլ զորամասերի հետ Մուխանջիկ է հասնում Հայկական 1-ին խումբը Անդրանիկի գլխավորությամբ և դիրքավորվում նախանշված վայրում:

Դիլմանի մոտ տեղի ունեցած ձակատամարտում օսմանյան ուժերն ունեին զգալի գերազանցություն, սակայն նրանք մեկ օրով ուշացրել էին հարձակումը, որը հնարավորություն էր տվել գեներալ Թ. Նազարբեկյանին ոչ միայն ստանալ համալրում, կազմակերպել պաշտպանական դիրքեր, այլև ունենալ պահեստագոր: Գործողության հաջողության դեպքում թուրքերը հնարավորություն էին ունենում ռոքի հանել ոչ միայն ողջ Հյուսիսային Պարսկաստանի, այլև Անդրկովկասի, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի մահմեդականությանը: Դիլմանի ձակատամարտում ի հայտ եկավ Թովմաս Նազարբեկյանի զորավարական տաղանդը, որի շնորհիվ հնարավոր եղավ կասեցնել Հալիլ բեյի հրամանատարությամբ գործող գերազանց ուժերին: Առանց չափազանցնելու կարելի է փաստել, որ Դիլմանի ձակատամարտն իր նշանակությամբ հավասարագոր էր Սարիղամիշի ձակատամարտին: Պատահական չէ, որ գեներալ Թ. Նազարբեկյանին շնորհվեց ռուսական բարձրագույն Սբ. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանը և հասարակությանը քիչ հայտնի ֆրանսիական բարձրագույն “Médaille militaire” («Ռազմական մեդալ») մեդալը⁷:

6 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 61, թ. 8:

7 Շնորհվում էր մարտական գործողությունների ժամանակ բացառիկ հերոսություն ցուցաբերած շարքայինների ու ենթասպաներին: Սպաներից պարգևատրվում էին միայն բանակների հրամանատարներն ու գլխավոր հրամանատարները, որի դեպքում իր կարգավիճակով գերազանցում էր Ֆրանսիայի բարձրագույն պարգև հանդիսացող «Պատվո լեգեոն» շքանշանին:



Médaille militaire

Զարմանալին այն է, որ հանդիսանալով Կովկասյան բանակի բարձրաստիճան սպա, հետագայում թիկունքի պետ, գեներալ Ե. Մասլովսկին իր աշխատությունում հարկ է համարել նշել, որ Թ. Նազարբեկյանի Դիլմանում մնալու հետևանքով հնարավոր չեղավ հետապնդել թշնամուն՝ Մինչդեռ՝ ինչպես հետևում է Ե. Մասլովսկու հաջորդ գրառումներից, Կովկասյան բանակի շտաբից ստացված հրամանը՝ հետապնդել Հալիլ բեյի զորամասերին չի կատարվել Ադրբեջանական ջոկատի հրամանատար, գեներալ Ֆ. Չեռնոզուբովի կողմից⁸:

Գեներալ Թ. Նազարբեկյանն իր հուշերում լուսաբանել է նաև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուս-թուրքական ռազմաճակատում ծավալված հայ կամավորական շարժումը: Հայտնի է, որ Կովկասում կամավորական շարժման նախաձեռնությունը պատկանում էր փոխարքայությանը: Առաջարկը համընկավ հայ հասարակական, քաղաքական ու կրոնական շրջանակների իղձերին՝ ռուսական բանակի հետ միասին պաշտպանել արևմտահայությանը կտորածներից և ազատագրել Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության տիրապետությունից: Կամավորները անհրաժեշտ էին նաև Կովկասյան բանակի թվակազմը որոշ չափով լրացնելու համար, քանի որ երկրամասից Հարավ-արևմտյան ճակատ էր ուղարկվել զորամասերի 2/3-ը: Ռուսական իշխանություններին հայտնի էր, որ հայ ժողովուրդն իր վրա կվերցնի կամավորների հետ կապված ծախսերի զգալի մասը, որը հնարավորություն կտա կառավարությանը խնայել որոշ ֆինանսական միջոցներ, որոնք պատերազմի ժամանակ շատ էին անհրաժեշտ:

Մարտական գործողությունների առաջին փուլում կամավորները ցուցադրեցին քաջության ու արիության բազմաթիվ օրինակներ, որը նշում էին նաև ռուս հրամանատարները: Այսպես, հատկապես Քեռու և հայ կամավորների անվեհերության ու հնարամտության շնորհիվ օսմանյան շրջապատումից դուրս բերվեց գեներալ Ն. Բատումինի Օլթիի ջոկատի վերջապահի մեծ մասը: Վերջինիս հրամանատար, փոխգնդապետ Քուրթթեյլաձեն 750 զինվորներով նախընտրում է հանձնվել թուրքերին¹⁰:

Թ. Նազարբեկյանը անդրադառնում է նաև Վանի հայության ինքնապաշտպանությանը: Նա մանրամասնորեն նկարագրում է այն դեպքերն ու

8 Տե՛ս **Масловский. Е. В.**, նշվ. աշխ., էջ 157: Բրիտանացի պատմաբանները, կրկնելով Ե. Մասլովսկուն, նշում են, որ Թ. Նազարբեկյանը չնախաձեռնեց Հալիլի ուժերի հետապնդումը, տե՛ս **Allen W. Ed. D., Muratoff P.**, *Caucasian Battefelds. A History of the Wars of the Turco-Caucasian Border 1828-1921*, London, Cambridge, 1953, էջ 299:

9 Տե՛ս **Масловский. Е. В.**, նշվ. աշխ., էջ 161:

10 Տե՛ս **Масловский. Е. В.**, նշվ. աշխ., էջ 61, տե՛ս նաև՝ **Корсун Н.**, *Сарыкамьшская операция на Кавказском фронте мировой войны 1914-1915 гг.*, Москва, 1937, էջ 40-41:

իրադարձությունները, որոնք պատճառ դարձան, որպեսզի վանեցիները զենքը ձեռքին մարտնչեն թուրքական կանոնավոր զորամասերի և քրդական զինված ջոկատների դեմ: Որպես ցայտուն օրինակ Թ. Նազարբեկյանը վկայակոչում է Իշխանի (Նիկողայոս Պողոսյան) և նրա ընկերների սպանությունը, որոնք իշխանությունների առաջարկությամբ գնում էին Շատախ՝ խաղարար առաքելությամբ: Ինչպես հետևում է Թ. Նազարբեկյանի գրառումներից, նրան մեծ ուրախություն պատճառեց վանեցիների դիմադրության հաջող ավարտի լուրը: Գեներալը գտնում էր, որ իր զորամասը ևս իր համեստ լուծման ունեցավ այդ հաղթանակում, քանի որ հետապնդելով Հալիլ բեյին՝ թույլ չտվեց օգնության հասնել Վանը պաշարած թուրք-քրդական ուժերին: Զորավարը հպարտությամբ փաստում է, որ հայերը, նույնիսկ սուղ միջոցներով կարողացան դիմագրավել թշնամուն: Նա հայերի դիմադրությունը անվանում է ինքնապաշտպանություն, որը նպատակ ուներ փրկել խաղաղ բնակչությանը թուրք-քրդական կոտորածներից:

Գեներալ Թովմաս Նազարբեկյանի հուշերի՝ ռուսերենից հայերեն թարգմանված անտիպ տարբերակը տպագրվում է առաջին անգամ, առանց կրճատումների: Մեր միջամտությունները կատարվել են ուղղագիծ փակագծերով: Տողատակում կատարված ծանոթագրությունները մերն են: Բնագիրը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում:

Ռուբեն Օ. Սահակյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՏԵՏԲ 2.

10 օգոստոսի 1928 թ.

Թիֆլիս

1914 թ. դեկտեմբերի մեր աննպատակ նահանջից և քաղաքները թողնելուց հետո, 1915 թ. հունվարի 1-ին Ադրբեջանական ջոկատը բաղկացած էր երկու խմբից, մեկը տիրում էր քաղ. Խոյին ու նրա շրջակայքին, պաշտպանելով այդ քաղաքն ու շրջակայքը: Հակառակորդը դիրքավորվել էր Խոյից հարավ՝ Դուզ-Դաղ լեռն ունենալով որպես կենտրոն և արևմուտքում՝ Կոթուրի ձորի կողքին գտնվող լեռների լանջերին: Վառ գյուղից մինչև Եգդիկյան ներառյալ լտեղակայված էին Կով. հրաձգ. բրիգադի 5-րդ և 7-րդ գնդերը, Կովկ. 2-րդ հրաձգ. դիվիզիոնի լեռնային հրետանու 1-ին ու 3-րդ մարտկոցները, հետևակ սահմանապահների 2 հարյուրյակ, 3-րդ հերթի Թամանյան ու Կուրանյան գնդերը:

Հաջորդ զորախումբը (Կովկ. հրաձգ. բրիգադի 6-րդ և 8-րդ գնդերը, Կովկ. 2-րդ հրաձգ. դիվիզիոնի 2 մարտկոց, Հայկական դրուժինան, հետևակ սահմանապահների երկու հարյուրյակ, Ստավրոպոլյան դրուժինան, զորահանգրվանային գումարտակը և առաջին հերթի Պոլտավյան ու Սունժենյան կազակային գնդերը) գտնվելով քաղ. Զուլֆայի ու Մարանդի միջև, դիմագրավում էին հակառակորդին, որը ռուսական զորքերի նահանջից հետո գրավեց Թավրիզը, Սոֆյանի լեռնանցքը:

Հունվարի սկզբին կարգադրություն ստացվեց բրիգադի գնդերում կազմավորել 3-ական գումարտակներից կազմված անձնակազմ: Համալրման համար բերվեցին զորահանգրվանային գումարտակներ: Զորահանգրվանային գումարտակներով համալրումը զգալիորեն նվազեցրեց գնդերի մարտունակությունը, սակայն շնորհիվ 3 գումարտակների, զգալիորեն թեթևացավ մարտական ծառայությունը, ծայրահեղ

ղեկավարում գումարտակները կարող էին հանգստանալ: Բացի այդ, լեռնային մարտկոցի կազմավորման համար յուրաքանչյուր մարտկոցից վերցրեցին երկուական թնդանոթ և այդ մարտկոցը մտավ [համալրեց] 66-րդ հետև. դիվիզիայի մեջ, իսկ 66-րդ հետև. դիվիզիայից կազմվեց թեթև¹¹ [իրետանու] մարտկոց, որը հետագայում տեղափոխվեց Կովկ. 2-րդ հրաձգ. դիվիզիոն: Այսպիսով, դիվիզիոնում կար 4 մարտկոց՝ 3 լեռնային ու 1 թեթև մարտկոցում 6 թնդանոթ:

Հունվարի 10-ից հետո Ջուլֆայի ջոկատը սկսեց կենտրոնանալ Մարանդայում և այդ կերպ մարտական գործողությունների սկզբին կենտրոնացվել էին 2 գունդ՝ 6-րդ և 8-րդ հրաձգ. գնդերը, 2 մարտկոց (մեկը լեռնային և մեկը թեթև), սահմանապահների երկու հետևակ հարյուրյակներ, Հայկական 1-ին կամավորական դրոժինան ու 1-ին հերթի Պոլսավյան և Սունժենյան կազ. գնդերը:

Խոյում հարավային տեղամասը պաշտպանում էին 5-րդ հրաձգ. գունդը, 2 լեռն. թնդ. և 3-րդ հերթի Կուբայյան գնդի 3 հարյուրյակներ, իսկ արևմտյանը՝ 7-րդ հրաձգ. գունդը, 4 լեռն. թնդանոթներ և 3-րդ հերթի Թամանյան գնդի երեք հարյուրյակներ: Խոյում՝ պահեստագործում գտնվում էին գնդերից մեկական գումարտակներ, [հետևակ] սահմանապահների 2 հարյուրյակներ, մեկ լեռնային մարտկոց և Թամանյան ու Կուբայյան կազ. գնդերի երեքական գումարտակներ: Ավելի ուշ ուղարկվեցին 4 թնդանոթներից կազմված միացավոր¹² մարտկոց, որից 2 թնդանոթ ուղարկվեցին հարավային ճակատ:

Հակառակորդը մի քանի անգամ դիմում է ակտիվ գործողությունների, ձգտելով շրջանցել մեր թևերը՝ ձախը Ուրմիա լճի, իսկ աջը՝ Սիզուսի կողմից, սակայն այդ գործողությունները ավարտվում են նրանց համար մեծ կորուստներով: Հարավային ճակատում մեր հրաձգները, մարտերի ժամանակ մեկ անգամ չէ, որ հակառակորդի շարքերում տեսել էին Սիմկոյին Ստանիսլավը¹³ կռճկամայրին, որին չգիտես, թե ինչու հովանավորում էր Չեռնոգուբովը:

Խոյ քաղաքը, չնայած ձեռնարկված խիստ միջոցներին, հեղեղված էր թուրք լրտեսներով: Նրանց քաղաք մտնելը դյուրացնում էր այն հանգամանքը, որ գյուղ-մթերքները քաղաք էին բերվում շրջակա գյուղերից: Չնայած, որ բնակիչները քաղաք էին մտնում ամբողջական դարպասներով, որտեղ կանգնած էր մեր պահակախումբը, սակայն նույնիսկ ամենամարակրկիտ զննման ղեկավարում հնարավոր չէր քաղաքն ապահովել լրտեսների թափանցումից: Բնակիչներն ամբողջությամբ թուրքերի կողմն էին: Դա հասկանալի էր, քանի որ նրանց թուրքերի հետ մերձեցնում էր իրենց կրոնը, բացի այդ, չնայած ողջ խստությանը բարձրագույն ղեկավարության կողմից, ինչպես կրտսեր սպայությունը, այնպես էլ զինվորները հաճախակի վիրավորում էին պարսիկներին և ցավոք, նրանց գանգատները հիմնականում մնում էին չբավարարված: Մեր զինվորները միշտ այլացեղերին վերաբերվում էին որոշ արհամարհանքով, լավագույն դեպքում անտարբեր, սակայն առիթը բաց չէին թողնում թալանելու համար, իսկ տեղաբնիկներն, իհարկե, ռուսներին դիտում էին որպես անխուսափելի չարիք¹⁴: Ընդհանրապես քիչ տարբերություն կար, որ մենք գործում

11 Թեթև թնդանոթները հիմնականում 1877 և 1900 թթ. նոյնների 76 մմ տրամաչափի թնդանոթներն էին, որոնք գլխավորապես օգտագործվում էին Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական ռազմաճակատում: Հեռահարությունը 6470 մետր էր:

12 Միացավոր փակադակը հանդիսանում էր իրետանու մեխանիզմի մի մասը, որի միջոցով բացվում և փակվում էր թնդանոթի լիցքավորման փողը: Նախատեսված էր բացառապես պարկուճավոր արկերի համար:

13 Նկատի ունի Սուրբ Ստանիսլավի շքանշանը (1831-1917), որով գլխավորապես պարգևատրվել են Ռուսական կայսրության աստիճանավորները: 1844 թ. սկսած ոչ քրիստոնյաների համար նախատեսված շքանշաններում հանվել է Սբ. Ստանիսլավի պատկերը, այն փոխարինելով երկգլխանի արծիվով: Սիմկոն արժանացել էր 3-րդ աստիճանի շքանշանի:

14 Ինքնին հասկանալի է, որ Հյուսիսային Պարսկաստանի բնակչությունը ռուսական գործին ընդունում էր որպես զավթիչ, սակայն չպետք է անուշադրության մատնել նաև այն կարևոր հանգամանքը, որ թուրքական կողմին հաջողվել էր բորբոքել տեղաբնիկների կրոնական մոլեռանդությունը, որը երևան էր եկել դեռևս 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ: Պարսկաստանի այդ հատվածից զինված ջոկատները մասնակցեցին հայերի դեմ մղված մարտերին ու կոտորածներին, իսկ 1911 թ. գարնանը

էինք չեզոք, թե թշնամական երկրում:

Հունվարի սկզբներին [Խոյի] պարետն ինձ գեկուցեց, որ ինքը ձերբակալել է գլխավոր մոլլային՝ մզկիթում մեր դեմ քարոզելու ու մզկիթի վրա կանաչ դրոշակ դնելու համար: Ես, իհարկե, հավանություն տվեցի նրա կարգադրությանը: Ձերբակալությունից մի քանի ժամ անց ինձ մոտ եկավ Խոյի նահանգապետը մի քանի պատվավոր անձնաց հետ և խնդրեցին ազատել մոլլային, խոստանալով, որ իրենք երաշխավորում են նրա համար և հետագայում նման դեպքեր այլևս չեն լինի: Ես հրամայեցի նրան ազատ արձակել՝ նախագգուշացնելով, որ եթե երբևիցէ նման մի բան նկատվի, ապա ես ստիպված կլինեմ նրան արտաքսել Խոյից:

Այս դեպքից մի քանի օր անց պարետը ինձ գեկուցեց, որ պարսիկները մեր ռուբլին սկսել են ընդունել որպես 80 կոպ., իսկ մինչ այդ հավասար էր 1 ռ. 20 կ.: Ես կանչեցի նահանգապետին և հարցրեցի փոփոխության պատճառը և քանի որ նա չկարողացավ իր կարգադրությունը արդարացնել հիմնավոր փաստարկներով, ես հրամայեցի, որպեսզի նա կարգադրի, որպեսզի քաղաքում մեր փողերը ընդունեն հին գնացուցակով: Իմ հրամանը կատարվեց:

[1915 թ.] հունվարի 16-ին ես ստացա Ադրբեջանական ջոկատի հրամանատարի հեռագիրը՝ Սոֆիանի ու Թավրիզի տակ տեղի ունեցած հաղթանակի մասին: Մինչ այդ տեղեկացումը ես ոչինչ չգիտեի նախատեսվող օպերացիայի մասին: Ես հեռագրով իմ զարմանքը հայտնեցի Ադրբ. ջոկատի շտաբի պետին այդ առթիվ: Հեռագրով շնորհավորեցի գեներ. Չեռնոզուբովին և այդ մարտերին մասնակցած իմ զորամասերին հաղթանակի առթիվ:

Խնդիրը հետևյալն էր՝ ըստ գեն. Չեռնոզուբովի մշակած պլանի, Ջուլֆայի ջոկատի բոլոր զորամասերը կենտրոնացվել էին Մարանդի մատույցներում և անցել հարձակման: Թավրիզի վրա հարձակումը կատարել են երեք զորապույուներով՝ 1. հարավային՝ հեծելազորային, որի կազմում էին Պոլտավյան կազ. գունդը գնդապետ Նալգինի հրամանատարությամբ, 2. կենտրոնական՝ Յայան լեռնանցքով, Սոֆիանի ճանապարհով՝ Կովկասյան 6-րդ հրաձգ. գնդի 2 գումարտակներով, Կովկ. 8-րդ հրաձգ. գնդի, հետևևս սահմանապահների 2 հարյուրյակով, մեկ թեթև մարտիկոցով ու լեռնային մարտկոցի մեկ դասակով գնդապետ Տրեդենսկու հրամանատարությամբ, 3. հյուսիսային՝ Բինան-Ելինջա-Դիմ-Մուժամբար-Պարդիլ գյուղերի ուղղությամբ՝ 8-րդ հրաձգ. գնդի 1 գումարտակ, Հայկական կամավորական դրուժինան, 4 լեռնային թնդանոթ և Սոււժենյան կազակ. գունդը գեներ. Աֆրոսիմովի¹⁵ ընդհանուր ղեկավարությամբ:

Հունվարի 15-ին, արշալույսին, սկսվել է հարձակումը: Եղանակը շատ անբարենպաստ էր՝ ուժեղ մշուշ, որից հետո լեռներում ու լեռնանցքներում սկսեց թաց ձյուն, իսկ ներքևում՝ ուժեղ անձրև: Շրջանցիկ զորապույուները ծանր դժվարություններ տարան, մինչև լեռնանցքներն անանցանելի ցեխ էր, իսկ լեռնանցքներում խորը ձյուն, ուստի ստիպված էին միջանցքներ բացել ձյան մեջ: Մարտի համար վճռական նշանակություն ունեցավ ձախ զորապույունը: Արշավի առաջին օրը, մինչև Ալինջա գյուղը հասնելը, զորապույունը առաջանում էր առանց հեծելազորի, Բինան գյուղից բեռներով, ձյան միջով ողջ օրը՝ արագացված երթով: Առաջապահում ընթանում էր 8-րդ գնդի գումարտակը Եգուպովի¹⁶ հրամանատարությամբ, որը ողջ ընթացքում կորցնում է կապը երկարաձգված իր գլխավոր ուժերի հետ: Դիմ գյուղում ջոկատը կարճատև գնդակծության ենթարկվեց սարսափած բնակչության կողմից: Լուսա-

թյուրբական «շահսևան» ցեղախումբը հարձակվեց Ղարադաղի (Սև լեռներ) հայկական գյուղերի վրա: Ավելի մանրամասն տե՛ս **Սահակյան Ռ.**, Փաստաթղթեր Յակով Զավրիևի անտիպ արխիվից, «Պատմաբանասիրական հանդես», 2011, N 2, էջ 270: Ղարադաղի մասին ավելի մանրամասն տե՛ս **Հովսեփյան Հ.**, Ղարադաղի հայերը. Ազգագրությունը, հատ. I, Եր., 2009:

¹⁵ **Աֆրոսիմով Միխայիլ Ալեքսանդրի** (1864-?), գեներալ-մայոր:

¹⁶ **Եգուպով Յակով Կոնստանտինի** (1870-?), կապիտան, գնդապետ (05.08.1916): Ռուս-ձապոնական պատերազմի մասնակից (1904-1905): Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի հրամանատար (1917): Դիլմանի ձախտամարտի համար պարգևատրվել է Սբ. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանով: Սպիտակ շարժման մասնակից:

բացին Պարզիլ գյուղին մոտենալիս սկսվեց հորդառատ անձրև, որը բարձրացրեց գետակների մակարդակը, որոնք անանցանելի դարձան հետևակի համար և հիմնավորապես կանգնեցրին ընդհանուր առաջխաղացումը: Դեպի ճանապարհի [Սոֆիանից Թավրիզ տանող] մեր հարձակումով մենք կտրեցինք հակառակորդի այն ուժերը, որոնք ժամանակին չէին նահանջել Սոֆիանից Թավրիզ, քանի որ ճանապարհի [նահանջի] միակ ուղին էր բրնձի մածուցիկ դաշտերը: Թուրքերը շրջանցիկ ջոկատը դիմավորեցին հրացանային ու գնդացրային ուժեղ կրակով՝ տեղակայված լինելով Ջեմերը-Բիդիլ գյուղի բլուրների վրա: Սունժենյան գնդի առանձին հարյուրյակների գալուց հետո, գնդապետ Ջեմցովի հրամանով, նրանք հեղեղի նման գնացին գրոհի գրեթե քայլելով, ձիերը մինչև ծնկները ցելաի մեջ [խրված] լինելով: Հակառակորդի խրամատներին մոտենալիս գետինը դառնում է ամուր և 4 հարյուրյակների հեծելազորային մարտը վերածվեց սասանված հակառակորդի արյունալի ջարդի: Հակառակորդի զորամասերը, որոնք հիմնականում կազմված էին քրդերից ու երկրորդական կարգի նիզամից¹⁷, Թավրիզ տանող ճանապարհին, Սավալան գյուղի մոտ, խճուղուց 200-300 սաժեն¹⁸ հեռավորության վրա գտնվող բարձրունքներից ընկնում են գնդացրային մահաբեր կրակի տակ:

Հեծելազորի գրոհից և մութն ընկնելուց հետո թուրքերը նահանջեցին թողնելով մոտ 1000 դիակ: Մարտավայրը և առվակը ամբողջովին հեղեղված էին արյունով: Շրջանցիկ հետևակը հասավ մարտն ավարտվելուց հետո, այնպես որ ողջ ծանրությունը ընկավ ձախ գորայան՝ Սունժենցիների վրա: Աջ գորայանը նմանապես ուշացավ ճանապարհի դժվարանցանելիության պատճառով:

Թավրիզ բանագնաց ուղարկվեց քաղաքի հանձնման համար, որպեսզի խուսափեն քաղաքի հրետանակրծությունից ու ավելորդ զոհերից: Գիշերը Թավրիզից ժամանեց վաճառականների պատվիրակությունը, որը գեներ. Չեռնոզուբովին տեղեկացրեց թուրքերի Միանդար հեռանալու և մեզ ենթարկվելու մասին: Մեր զորամասերն առաջացան Թավրիզ, ու առանց որևէ միջադեպի քաղաքը գրավվեց:

Հակառակորդի հետապնդումը հանձնարարվեց լեռնային թնդանոթներով [զինված] Սունժենցիներին, սակայն գնդ. Ջեմցովի ու գեներալ Աֆրոսիմովի երբեմն աններելի գզուշությունը թույլ չտվեց նրանց առաջանալ գ. Ռավասանից այն կողմ:

Թավրիզում թողնվեց 8-րդ հրաձգ. գունդը և թեթև մարտկոց, ջոկատի մնացած զորամասերը ետ քաշվեցին դեպի Մարանդ ու այնտեղի շրջակա գյուղերում տեղավորվեցին հանգստի: Թավրիզի մարտից հետո Անդրանիկը մեկնեց Թիֆլիս¹⁹: Դրուժինան տնօրինում էր կապիտան Հովսեփյանցը:

Հունվարի 20-ի կողմերը, նախապես Խոյ եկավ Կարմիր խաչի առաջապահ ջոկատը, իսկ մի քանի օր անց նաև Կարմիր խաչի լազարեթը: Նրանց համար պահանջվեցին մեծ տարածքներ, որը քիչ հոգսեր չպատճառեց, քանի որ ստիպված էին տներից վտարել տերերին իրենց ընտանիքներով, որն ինձ համար այնքան էլ հաճելի չէր: Ինչպես առաջապահ ջոկատը, այնպես էլ Կարմիր խաչի լազարեթը ավելի հարուստ էր կահավորված մեր բժշկական հաստատությունների համեմատ և զգալիորեն բարելավեցին մեր հիվանդների դրությունը: Հատկապես մեծ էր ատամնաբույժի կարիքը, իսկ Կարմիր խաչի լազարեթն ուներ և ամեն օր այնտեղ էին գնում մեծ թվով ատամի խնդիր ունեցողները: Բացի այդ, նրանց անձնակազմը մեր միապաղաղ կյանքում որոշ աշխուժություն մտցրեց:

17 Նիզամ-թուրք. հետևակ:

18 1 սաժենը՝ 2,134 մետր:

19 Անդրանիկը մեկնել էր Թիֆլիս, որտեղ 1915 թ. փետրվարի 15-ից 18-ը տեղի ունեցավ հայ կամավորական շարժման առաջին փուլի հետ կապված տարբեր հարցեր քննարկելու նպատակով հրավիրված համագումարը: Ներկա են եղել 120 պատգամավորներ, «Հայ կամավորական խմբերի կարգադրիչ մարմին» անդամները ու կամավորական խմբերի հրամանատարները: Քննարկվելու էին հետևյալ հարցերը՝ 1. Հաշվի ու նախահաշվի քննությունը, 2. Ազգային Բյուրոյի անցյալ գործունեության տեղեկագիրը, 3. Ինքնապաշտպանության հարցը, Թուրքահայաստանի ապագա քաղաքական կազմակերպության հարցը, 5. Ազգային Բյուրոյի անդամների ընտրությունը և այլն, տես **Սահակյան Ռ.**, Հայկական կամավորական խմբերի գործունեության պատմությունից, ԲՀԱ, 2008, N 1, էջ 46-47:

Հունվարի 20-ին Խոյի ջոկատի կողմից ինչպես հարավում, այնպես էլ արևմուտքում միաժամանակ կատարվեց հակառակորդի դիրքերի հետախուզում: Պարզվեց, որ հարավային ձակատում հակառակորդի դիրքերի բանալին Դուզ-դաղ լեռն էր, իսկ արևմուտքում՝ Ակ-դաղ լեռը: Պաշտպանության համար կային խրամատների մի քանի հարկաշարքեր, և հակառակորդն ուներ 4 թնդանոթ:

Հունվարի 26-ին քուրդ ցեղապետ Սիմկոն (համոզվելով, որ ուժը մեր կողմն է) ինձ խնդրագիր ուղարկեց, ուր խնդրում էր ներել դավաճանության համար և խոստանում էր մեզ մեծ ծառայություն մատուցել: Հավանաբար Թավրիզի մեր ջախջախիչ [հաղթանակը] ակնառու կերպով նրան համոզեց, որ իրական ուժը մեր կողմն է, ուստի բնականաբար շտապեց, ինչպես ասված էր վերևում, քոչել մեր մոտ: Ես նրա թուղթը [խնդրագիրը] ուղարկեցի գեներ. Չեռնոզուրովին, իմ կարծիքը շարադրելով, որ այդ ավագակին ու խաբեբային չպետք է ետ ընդունել ու հավատալ նրա սուտ խոստումներին: Սակայն հետագայում իմ կարծիքն անուշադրության մատնվեց: Ցավոք գեներ. Չեռնոզուրովը [Սիմկոյին] ետ ընդունեց և նա ավելի մեծ հարգանք էր վայելում:

Հունվարի 29-ին Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի պատվավոր հրամանատար, մեծ իշխան Գեորգի Միխայլովիչի²⁰ Ջուլֆա ժամանելու առթիվ պահանջվեց շեֆակյան 1-ին վաշտը, որը ձանապարհվեց երգչախմբով և որին հետևեցին գնդի հրամանատարը՝ գնդային համհարզի հետ: Մեծ իշխանը շատ էր ցանկանում Խոյ գալ ու հանդիպել ողջ գնդին, սակայն գեներ. Չեռնոզուրովը ինչ-ինչ նկատառումներով մերժել էր: Մեծ իշխանը Գեորգիյան խաչեր²¹ հանձնեց վաշտին ու դրանք ուղարկեց գնդին: Մի քանի օր անց նա մեկնեց, իսկ վաշտը երգչախմբի ու հրամանատարի հետ վերադարձան Խոյ:

Տեղեկանալով, որ մեր հյուպատոսն է ժամանում և որ նա խնդրել է մինչև հունվարի 30-ը ազատել հյուպատոսական տունը, կրկին սրտի ցավով ստիպված էինք վտարել ընտանիքներին ու մեծ տներ զբաղեցնել, որտեղ կարող էին տեղավորվել բրիգադի և 2 գնդերի շտաբներն իրենց պետերով: Ստիպված էինք վերցնել երկու մեծ շինություն կամ տներ: Այդ նույն ժամանակ մենք լուր ստացանք, որ ք. Ուրմիայի եվրոպական մասը թալանվել է, ուղղափառ առաքելությունը հրդեհվել է:

Փետրվարի սկզբներին գեներ. Չեռնոզուրովն իր շտաբով Ջուլֆայից տեղափոխվեց Խոյ: Նրանից հետո եկավ Ուրմիայի նախկին հյուպատոս Վվեդենսկին²²: Փոխայցելություններ կատարեցինք:

Փետրվարի առաջին կեսին գեներ. Չեռնոզուրովը որոշեց վճռական միջոցների դիմել Խոյը շրջապատած հակառակորդի դեմ: Մարանդում ու Սոֆիանում կազմակերպվեցին ջոկատներ, որից մեկը գնդապետ Նալգիևի հրամանատարությամբ, բաղկացած Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 3 գումարտ., 1 լեռն. մարտկ. ու Պոլտավյան կազակային գնդից: Նրան հրամայված էր Ուրմիա լճի արևմտյան ափի երկայնքով առաջանալ ք. Դիլմանի ուղղությամբ: Մյուս ջոկատը՝ կազմված Հայկական կամավորական դրուժինայից ու հետևակ սահմանապահների երկու հարյուրյակից, գնդապետ Տրեդենսկու²³ հրամանատարությամբ Մարանդից ուղարկվեց ք. Խոյ: Այս ջոկատը գալով ք. Խոյ զբաղեցրեց Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի դիրքերը, իսկ գունդը կենտրոնացվեց Պերե գյուղում (Խոյ քաղ. արևմուտք, 12 վերստի հեռու): Այդ ջոկատը մինչև Խոյ անցումը կատարեց երեք օրվա ընթացքում: Նալգիևյան ջոկատի առաջին անցումը ավարտվեց Շարաֆխանե գյուղում գիշերելով (Ուրմիա լճի հյուսիսային ափ): Այստեղ մշակվեց հետագա հարձակման պլանը: Գիշերը Պոլտավյան գնդի

20 Ռոմանով Գեորգի Միխայլի (1863-1919), մեծ իշխան, գեներալ-համհարզ:

21 Գեորգիյան խաչով ու մեղավով պարզևատրվում էին բացառապես շարքայիններն ու ենթասպաները մարտում ցուցաբերած քաջության համար: Ուներ 4 աստիճան և պարզևատրվածների համար սահմանված էին արտոնություններ:

22 Վվեդենսկի Պավել Պյոտրի (1880-1938), ռուս դիվանագետ, Ուրմիայի փոխհյուպատոս և Խոյի փոխ-հյուպատոսարանի կառավարիչ (1914-1915):

23 Տրեդենսկի Ավտոնոմ Օնուֆրիի (1857-1916), գնդապետ, Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի հրամանատար:

երկու հարյուրյակ առաջացան գյուղ Խալը (քարտեզով Կալ): Առավոտյան եսաուլ²⁴ Ջոլոտարյովը տեղեկություն ստացավ, որ գյուղ Թասվիզում, որը ենթադրվում էր, որ գրավված է հակառակորդի կողմից, նկատվում է դեպի արևմուտք շարժվող գումակ: Կրակային կապ հաստատելու նպատակով առաջացած պորուչիկ Քուրաթե-լաձեն, Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի հետախույզների խմբի հետ հայտնաբերեց մեր դաշտային հացի փուռը, որը սխալմամբ էր առաջացել: Հացի փոխի հետ կապված խառնաշփոթը և իրական կրակային կապը Սիմկոյի ջոկատի հետ գյուղ Չեգերվանի մոտ, մեկ գիշերով ուշացրեց ջոկատի առաջխաղացումը, որը երեկոյան հասավ Թասվիզ գյուղը:

Գլխավոր ուժերը կորցնում են կապը չափից ավելի առաջացած 6-րդ գնդի հետախույզության հետ և հարկադրված էի հակառակորդի հաճախակի հրետանային կրակի դեմ ուղարկել համալրում կազակային հարյուրյակ 2 լեռնային թնդանոթներով: Մեր հետախույզական խմբի դեմ հրաձգություն վարող հեծելախմբերը թաքնվեցին լեռներում, երբ նրանց վրա կարճատև հրետանային կրակ բացվեց:

Գիշերը, ժամը 3-ի մոտերքը ջոկատը բաժանվում է ինքնուրույն զորայունների շարժվում է երկու զուգահեռ ուղղություններով, ավելի ստույգ՝ առաջադրում է շրջանցիկ զորայուն կազմված մեկ գումարտակից՝ 2 լեռնային թնդանոթներով: Առաջին զորայունը ուղվեց դեպի գյուղեր Չեգերվան, Քենյան, իսկ ձախը՝ գլխավոր ուժերը դեպի գյուղ. Ալմա-Սարայ-Գերուլան: Ալմա-Սարայի համար հակառակորդի հետ կռիվ սկսվեց: Առաջին զորայուն նպատակն էր [իր գործողությանը]՝ սպառնալ [շրջապատմամբ]²⁵: Երկու զորայունները միացան Գերուլան գյուղի մոտ՝ հակառակորդի մարտից խուսափելու պատճառով և ապա սկսեցին զարգացնել հարձակումը առաջապահ հեծելազորով: Ջոկատը, որը կազմված էր Հայկական դրուժինայից ու սահմանապահներից, գրավեց 5-րդ հրաձգ. գնդի դիրքերը: Այդ ջոկատի հարձակման անցնելու նախօրեին գեներ. Չեռնոզուրովն ինձ առաջարկեց այցելել դրուժինիկների դիրքերը: Ես հաճույքով համաձայնվեցի: Չեռնոզուրովը մեկնեց ինձ հետ միասին: Ճանապարհին նա անկեղծացավ ինձ հետ և ասաց, որ սկսել է ուսումնասիրել հայոց լեզուն: Նա լավ խոսում էր պարսկերեն ու քրդերեն լեզուներով: Ես նրան հարցրեցի, թե ով է իր հետ [հայերեն] պարապում: Նա պատասխանեց՝ Ցակով Քրիստափորի Ջավրիկը: Նրա խոսքերով հայերեն սովորելու նպատակն այն էր, որ ապագայում նա նախատեսվում է որպես Հայաստանի²⁶ գեներալ-նահանգապետ և անհարմար է հայերեն չիմանալ: Ես նրա հետ համաձայնվեցի, սակայն հոգու խորքում կասկածում էի, որ նա կարող է այդ տեղը զբաղեցնել, քանի որ դրա մասին երագողները քիչ չէին:

Դիրքերում մեզ դիմավորեց ջոկատի հրամանատար, գնդապետ Տրեդենսկին: Նա վշտացած էր այն պատճառով, որ գունդն իրենից վերցրել ու հանձնել էին ուրիշին, իսկ իրեն տվել էին անձանոթ զորամասեր: Նա, [Հայկական 1-ին] դրուժինային, որպես կիսականոնավոր զորամաս, անվստահությամբ էր վերաբերվում: Ես նրան հանգստացրեցի, ասելով, որ դրուժինան լավ է գործում մարտում: Նման փոփոխություն կատարել էր գեներ. Չեռնոզուրովը, քանի որ ավելի շատ էր վստահում գնդապետ Նալգիևին, որպես ակտիվ ու մարտական մարդու, ու բացի այդ՝ Նալգիևն ավելի բարդ առաջադրանք ուներ: Եվ ես, իհարկե, գլխի ընկա այդ տեղափոխման պատճառի մասին: Տրեդենսկին ինքը լավ և ազնիվ մարդ էր, սակայն ոչ զինվորական և ամբողջությամբ ուրիշներին էր ենթարկվում, որը և նկատելի էր նույնիսկ խաղաղ ժամանակ գունդը ղեկավարելիս:

Քանի դեռ Նալգիևյան ջոկատը շրջանցիկ զորաշարժ էր կատարում, փետրվարի 18-ին հարավային՝ Խոյի ջոկատը հարձակվեց հակառակորդի գլխավոր դիրքի՝ Դուզ-դաղի (այդ լեռը գտնվում է ք. Խոյից 15 վերստ) հարավ) վրա: Այդ լեռն

24 Կազակային սպայական կոչում, որը հավասարազոր է հետևակի կապիտանի կոչմանը:

25 Այդպես է ձեռագրում:

26 Արևմտյան Հայաստանի:

ամբողջությամբ ծածկված էր խրամատներով ու զգալիորեն գերիշխում էր տեղանքի վրա: Կենտրոնի վրա ուղղվեց Հայկական կամավորական դրուժինան, աջից գնում էին սահմանապահները, իսկ ձախից Կուբանյան կազ. գունդը: Դրուժինան ղեկավարում էր կապիտան Հովսեփյանցը (Անդրանիկն այդ ժամանակ Թիֆլիսում էր): Ականատեսները և հատկապես Տրեդենսկին, ինձ հետո պատմեցին, որ նրանք հիացած էին դրուժինայի գրոհով և կապիտան Հովսեփյանցի հմուտ ղեկավարությամբ, որը քաջ մարդ էր, փորձառու, ռազմական գործը ու հայերի հոգեբանությունը լավ իմացող, որին, սակայն, չէր սիրում Անդրանիկը, որն անընդհատ կարծում էր, որ նա իրենից խլում է մարտական դափնիները:

Այս մարտից հետո գնդապետ Տրեդենսկին բացարձակապես փոխեց դրուժինայի վերաբերյալ իր սխալ կարծիքը ու սկսեց սիրով վերաբերվել նրան և դրուժինիկները նույնպես սիրեցին նրան ու նրան անվանում էին «Պապաշա» [«Հայրիկ»]:

Կարա-թեփե լեռնանցքը գրաված ու [հակառակորդի] թիկունքն անցած Նալգիևի ջոկատի սպառնալիքը և ձակատի վճռական գրոհը հարկադրում են հակառակորդին համառ պաշտպանությունից ու բավականին մեծ կորուստներից հետո նահաջել հարավ-արևմուտք՝ դեպի Եգդիկյան²⁷ գյուղի գլխավոր դիրքերը: Այդ նույն օրը երեկոյան Կովկ. 5-րդ հրաձգ. գունդը կենտրոնացվեց Պերե գյուղում:

Դուզ-դաղը գրավելուց և շրջանցիկ զորայունների կենտրոնացումով Կարա-թեփե լեռնանցքում ու Փերե գյուղում, աղբրեջանական ջոկատի՝ զորքերը²⁸ փետրվարի 20-ին անցան ընդհանուր հարձակման: Այդ հարձակման նպատակն էր Կոթուրի կիրճով նահանջող հակառակորդի [ձանապարհը] փակել: Այդ նպատակով Նալգիևյան ու Տրեդենսկյան ջոկատներն առաջացան Եգդիկյան գյուղը և այդ գյուղի ետևում ընկած լեռները: Իմ ջոկատը, որը բաղկացած էր Կովկ. 5-րդ և 7-րդ հրաձգ. գնդերից, 6 լեռն. թնդանոթներից ու 3-րդ հերթի Թամանյան կազ. գնդից, միաժամանակ, փետրվարի 20-ի արշալույսին անցավ հարձակման, 7-րդ գունդը ես ռազմա-ձակատից ուղարկեցի Ակ-դաղ լեռը, իսկ 5-րդ գնդի 1 գումարտ. Պիսակ գյուղից դեպի Վառ [գյուղը], իսկ մնացած երկու գումարտակներին [իրամայվեց] շրջանցել հակառակորդի ձախ թևը Կեշկի-բուլաղ գյուղից դեպի Կեգլչան, իսկ հեծելագործը շարժվեց Կուխյուրտու գյուղի վրա: Սակայն, 5-րդ հրաձգ. գնդի հրամանատար, գնդապետ Դոկուչանի անվճռականության ու դանդաղկոտության հետևանքով, ինչպես ենթադրվում էր, [չհաջողվեց] փակել հակառակորդի ողջ ջոկատի ձանապարհը Կեգլչան գյուղի մոտ, չնայած այն հանգամանքին, որ անձամբ գալով, ես եռանդուն հարձակում սկսեցի, ինձ հաջողվեց գերել վերջապահի մի մասը, մոտ 300 հոգի, իսկ մնացած ուժերը շտապ նահանջեցին Կոթուր և ավելի հեռու: Ստիպված էի նրանց հետապնդել հրացանային ու հրետանային կրակով, ապա հեծելագործով: Ցավոք ես ուշացա, քանի որ ցանկանում էի պարզել, թե շրջանցիկ զորայունից դեպի աջ կամ արդյոք հակառակորդ:

Մութն ընկնելուց հետո 5-րդ հրաձգ. գունդը գիշերակացի մնաց Կեգլչան գյուղի մոտ, 7-րդը՝ Ակ-դաղ լեռան վրա, իսկ հարավային ջոկատը՝ Եգդիկյան գյուղի մոտ և Ռախանի գյուղում (Հայկ. դրուժինան): Կարաթեփե լեռնանցքում Դիլմանի կողմից առաջակալ դրվեց: Իմ կողմից հեծելապարեկներ ուղարկվեցին գրեթե մինչև Ջեյվա գյուղը: Տեղերում հակառակորդը թույլ դիմադրություն էր ցույց տալիս, հատուկենտ ասքյարներ անձնատուր էին լինում:

Հաջորդ օրը, այսինքն փետրվարի 22-ին, գնդապետ Նալգիևի ջոկատը, որը կազմված էր Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի գումարտակից, նույն գնդի հետախույզների ստորաբաժանումը, լեռն. 2-րդ մարտկոցը և Պոլտավ. կազակ. գունդը, գրեթե առանց մարտի գրավեց քաղ. Դիլմանը: Թուրքերն ու քրդերը հեռացան իրենց սահմանները:

²⁷ Եգդիխանե:

²⁸ Նկատի ունի այն ռուսական զորամասերը, որոնք գործում էին Աղբրեջանական՝ Ատրպատականյան ջոկատի կազմում:

Ռազմագերիների կազմի կենս այն աստիճան թույլ էր ու հյուժված, որ իմ ներկայությամբ կատարված հարցաքննության ժամանակ դժվարությամբ էր կարողանում կանգնել, իսկ շատերը նույնիսկ վայր էին ընկնում: Հավանաբար թորքերի մոտ սկսել էր հայտնվել բժավոր տիֆը, որը և հետագայում հաստատվեց: Չուսած նրան, որ նրանք անմիջապես մեկուսացվեցին, սակայն հիվանդությունը սկսեց արագ տարածվել մեզ մոտ: Հիվանդության տարածման հիմնական պատճառը գերիների ու սպանվածների իրերն ու հագուստներն էին, որոնք վերցնում էին զինվորները. մինչ այդ մեզ մոտ բժավոր տիֆի դեպքեր չէին եղել:

Մարտական գործողությունների ավարտից հետո մեզ մոտ ժամանեց Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, հեծելազորի գեներալ Օգանովսկին: Ինձ տեղեկացրին, որ նա ինձ մոտ՝ ջոկատում կլինի [փետրվարի] 21-ին, որի համար ես 5-րդ հրաձգ. գունդը Կեզլչան գյուղից տեղափոխեցի Սորբ: Այստեղ իմ բրիգադն առաջին անգամ հանդիպեց իր կորպուսի հրամանատարին: Ինձ մոտ դիրքեր ժամանելուց և ջոկատը ստուգելուց հետո, նա շնորհակալություն հայտնեց մարդկանց [զինվորներին] և ինձ մարտական գործողությունների համար: Ես նրա հետ նախկինում լավ ծանոթ էի: Նա քաղաքավարի ու շատ բարի մարդ էր: Նրա մեկնելուց հետո, փետրվարի 23-ին հրամայվեց 5-րդ հրաձգ. գունդը, 1 լեռնային մարտկոցը ու շտաբը տեղակայել Ջելվա գյուղում (Խոյից 10 վերստ արևմուտք), Թամանյան գնդի կազակներին՝ Պերե գյուղում, որտեղի հեծելապարեկներ էին ուղարկվում, Կոթուրի մուտքի մոտ, Ռախանի գյուղում գտնվող Հայկական դրուժինան տեղափոխվեց Խոյ քաղաքից հյուսիս՝ Սարդարավար գյուղը: Այդ ժամանակ դրուժինա էր վերադարձել Անդրանիկը: Ռախանի գյուղը զբաղեցրեցին 7-րդ հրաձգ. գունդը 2 լեռն. թնդանոթներ, 6-րդ գնդի երկու գումարտակ, մեկ լեռնային մարտկոց և Սունժեյան կազ. գունդը, ինչպես նաև հետևակ սահմանապահների 4 հարյուրյակ՝ ք. Խոյում ու նրա շրջակայքում, ք. Դիլմանում՝ 6-րդ հրաձգ. գնդի 1 գումարտակ, նույն գնդի հետախույզների ստորաբաժանումը, և Պոլտավյան կազակ. գունդը, ք. Թավրիզում՝ Կովկ. 8-րդ հրաձգ. գունդը, թեթև մարտկոցը ու Կուրանյան կազ. գնդի 2 հարյուրյակ, բացի այդ, ինչպես ք. Խոյում, այնպես էլ և ք. Ջուլֆայում գտնվում էին ռազմահանգրվանային վաշտեր ու Ստավրոպոլյան դրուժինան:

Այս օպերացիաներից հետո հարաբերական խաղաղություն տիրեց, միայն հազվադեպ տեղի էին ունենում զինված բախումներ քրդերի հետ: Մարտի սկզբներին գեներ. Չեռնոզուբովը մեկնեց քաղ. Թավրիզ՝ շահի թագաժառանգ արքայազնի (Վալի-ախ²⁹) նախատեսվող առաջին ժամանման առթիվ: Ինձ հրամայվեց տեղափոխվել Խոյ և գեներ. Չեռնոզուբովի բացակայության պայմաններում ստանձնել ջոկատի հրամանատարությունը: Գեներ. Չեռնոզուբովը պետք է ներկա լիներ այդ տոնակատարություններին: Խոյ գալով, ես այստեղ՝ շտաբում առաջին անգամ ծանոթացա Բեդիր խան Զադե Աբդուլ Ռիզակի³⁰ հետ, որին մեր կառավարությունը

29 Այդպես է բնագրում:

30 **Աբդուրբեգակ (եզգանչիր) Բադրխան, Բադրխան բեյի որդի** (1864–1918), ազգությամբ քուրդ: 1890-ական թթ. Ս. Պետերբուրգում օսմանյան դեսպանատան երրորդ քարտուղար: Մերտ կապեր ուներ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հետ: Կենսագրությունից հետևում է, որ եղել է արկածախնդիր անձնավորություն: 1906 թ. 25 ալ քրդերի հետ միասին մեղադրվել է Կ. Պոլսի նահանգապետի սպանության մեջ, որից հետո արքայրվել է Տրիպոլի: 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո վերադարձել է Կ. Պոլիս, ապա Պարսկաստան: Մերտ կապեր է ունեցել Վանի փոխխոյապետու Ս. Օլֆերիսի հետ: Ռուսական կառավարությունը Աբդուրբեգակին պարգևատրել է Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշանով: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անհաջող փորձ է կատարել կազմակերպել քրդերի ապստամբություն: Ցեղակիցների շրջանում հեղինակություն չի ունեցել: 1915 թ. մայիսին ռուսական հրամանատարությունը Աբդուրբեգակին թույլատրում է կազմակերպել մոտ 200 հոգուց կազմված քրդական հեծելաջոկատ: Վերջինս հիմնականում զբաղվում էր տեղի բնակչության, գլխավորապես եզդիների թալանով: Մի քանի անգամ Վանի կայազորի պետ, գեներալ Ա. Նիկոլանը դիմել է հրամանատարությանը խնդրելով հեռացնել Աբդուրբեգակին ու նրա ջոկատին, քանզի նրանք ապակայունացնում են իրադրությունը, սակայն ապարդյուն: 1918 թ. բռնվել է թուրքերի կողմից և մահապատժի ենթարկվել: Ռուս-թուրքական ռազմաճակատում Աբդուրբեգակի գործունեության գնահատականը ըստ ռուսական արխիվային փաստաթղթի տե՛ս **Սահակյան Ռ.**, Ռուսական բանակի հայկական և քրդական ջոկատները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ԲՀԱ, 2010, N 1, էջ 29–31:

ցանկանում էր (ինքն էլ էր այդ մասին երագում) թուրքերի իշխանությունից ազատագրվելուց հետո նշանակել Քուրդիստանի³¹ ղեկավար: Բարձրահասակ էր, վայելչակամ ու բավականին գեղեցիկ: Կրթությունը եվրոպական էր: Կարծեմ մեր կառավարությունից ամսական մոտ 300 ռուբլի³² էր ստանում: Մինչև պատերազմը բնակվում էր Լենինգրադում³³: Նա ինձ առաջին իսկ հայացքից կասկածելի թվաց իր չափազանց հետաքրքրասիրության պատճառով: Նրան թույլատրվել էր իր մարդկանց միջոցով կապ հաստատել թուրքական քրդերի հետ, որոնք իբր թե նրան տեղեկություններ էին հայտնում հակառակորդի մասին: Մի խոսքով նա վայելում էր գեներալ Չեռնոզուբովի մեծ վստահությունը:

Հենց որ Խոյում մեր օպերացիաներն ավարտվեցին, հայտնվեց նաև Միմկոն, չնայած այն հանգամանքին, որ շատերը նրան տեսել էին մեր դեմ գործող թուրքերի շարքերում: Այդ մասին, հունվարին, ես զեկուցել էի գեներալ Չեռնոզուբովին: Չնայած այդ ամենին Միմկոն այնուամենայնիվ որոշակի պատիվ էր վայելում Չեռնոզուբովի մոտ, սակայն, այդ հանգամանքը ոչ միայն ինձ, այլև շատերին ծայրահեղ ապշեցնում էր ու վրդովեցնում:

Մարտի 9-ին Թավրիզ գալու և մահմեդական տոնակատարությունների (մարտի 9) սկսվելու կապակցությամբ մեզ մոտ Խոյում պարսկական պաշտոնական անձնաց, ինչպես նահանգապետ Կարաբուզարի և ք. Խոյի այլ ազդեցիկ անձանց կողմից պաշտոնական հրավերք ստացվեց այդ հանդիսությունների համար: Այդ հանդիսավոր ճաշկերույթների ժամանակ ես համոզվեցի, թե մեր հյուպատոսները որքան էին ձգտում առաջին դեր խաղալ քաղաքում, չնայած, իհարկե, գեներալ Չեռնոզուբովի մեկնելուց հետո, որպես ջոկատի պետի տեղակալ ես էի համարվում քաղաքի առաջին դեմքը, սակայն հյուպատոսը չէր ցանկանում նման բան թույլ տալ: Ճաշկերույթներից մեկի ժամանակ նա անընդհատ ցանկանում էր իմանալ, թե ես եկել եմ ու միայն իմ գալուց հետո էր ժամանում: Ես, իհարկե, ինքս անձամբ այդ պարագային ուշադրություն չէի դարձնում, սակայն իմ ու գեներալ Չեռնոզուբովի շտաբի անդամները մատնացույց արին այդ ու խնդրեցին ինձ նյութ անգամ ուշ գնալ, այսինքն, երբ հյուպատոսը տեղում կլինի: Ես այդպես էլ արեցի: Հրավիրվել էինք երեկոյան ժամը 8-ին: Շտաբի պետի ուղարկած հանձնակատարները ամբողջ ժամանակ հայտնում էին, որ հյուպատոսը դեռևս չկա: Սակայն, երբ հնչեց ժամը 9-ը ես անհարմար համարեցի չգնալ ու գնացի: Պարզվեց, որ հյուպատոսը մի քանի անգամ [մարդ] էր ուղարկել իմանալու, թե ես այնտեղ եմ, թե ոչ: Ի վերջո ժամը 10-ին տանտերը մարդ ուղարկեց նրա մոտ իմանալու, թե նա կգա, թե ոչ: Այդ ժամանակ հյուպատոսը ներողություն խնդրեց ու խնդրեց հայտնել, որ հիվանդության պատճառով չի կարող ներկա լինել: Ադրբեջանի³⁴ մեծ քաղաքներում ռուսական հյուպատոսները ակնառու կարևոր քաղաքական դերակատարություն ունեին: Նրանք էին ղեկավարում տեղական վարչակազմի գործողությունները, որոնք ամբողջությամբ նրանց էին ենթարկվում: Հյուպատոսները զորամասերի հետ անմիջական առնչություն չունեին: Հյուպատոսարանների պաշտոնյաների ու գնդի սպաների միջև կար սերտ համագործակցություն և ոչ միայն հյուպատոսական անձնակազմի, այլև ողջ ռուսական գաղութի և հայ մտավորականության հետ: Գնդային ժողովները և ռուսական ակումբները հասարակության և գաղութի ընդհանուր հավաքավայրն էին:

Մարտի 12-ին գեներալ Չեռնոզուբովը վերադարձավ Թավրիզից: Նա շատ գոհ էր իր ուղևորությունից: Ես այլևս շտաբի հետ չվերադարձա բնակվելու Ջեյլա

31 Ինչպես նշում է պատմաբան Վահան Բայբուրդյանը՝ «պատմագիտության մեջ «Քրդստան» կամ «Քուրդիստան» անվանումը օգտագործվում է սոսկ ազգագրական և աշխարհագրական իմաստով (Իրանի կամ Իրանական Քրդստան), որովհետև երբեք գոյություն չի ունեցել նման անվամբ քաղաքական միավոր: Հետևաբար նաև Քրդստան տերմինը զուտ պայմանական է և ժամանակի ու տարածության մեջ մշտապես ենթարկվել է փոփոխության», տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Քրդերը, հայերը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008, էջ 5:

32 Դա հավասարազոր էր ռուսական բանակի գնդապետի ամսական աշխատավարձին:

33 Ս. Պետերբուրգ:

34 Անրպատական:

գյուղում, այլ մնացի Խոյում: Նույն մարտի 12-ին ես հրաման ստացա Կովկ. 5-րդ հրաձգ. գունդն ուղարկել Ջուլֆա: [Մարտի] 13-ին գունդը ճանապարհ ընկավ: Լուր ստացվեց, թե իբր Կովկ. 2-րդ բրիգադը ուղարկվելու է Արևմտյան ռազմաճակատ, կար նաև այլ տարբերակ՝ Սարիղամիշ:

Այդ ընթացքում, հատկապես շտաբի աստիճանավորների վերաբերմունքը Հայկական դրուժինայի³⁵, իսկ հատկապես Անդրանիկի³⁶ նկատմամբ, վատացավ: Այդ անձանց անբարյացակամ վերաբերմունքը Անդրանիկի նկատմամբ դեռ հասկանալի էր: Նա իրեն ամբարտավան էր պահում, իրեն բոլորից բարձր էր համարում ու հաշվի չէր նստում ո՛չ բարձր ղեկավարության, ո՛չ էլ սպայության հետ: Վկայակոչեմ բնորոշ դեպք, որը կարող է ակնառու կերպով ցուցադրել այդպիսի ոչ բարեկամական վերաբերմունք: Հայկական դրուժինայում ծառայում էր երիտասարդ հնագետ Աշուրբեկ-Քալանթարյանը³⁷: Նա ապրում էր քաղ. Խոյում մի քանի դրուժինիկների հետ նույն տանը, 2-րդ հրետ. բրիգադի պետ, գնդապետ Շաումանի³⁸ հարևան սենյակում: Մի անգամ անցնելով շուկայով, Քալանթարյանն իր ցրվածության պատճառով հրում է Ադրբեջանական շտաբ գործուղված սպայի՝ պորուչիկ Բերեզովսկուն: Վերջինս պահեստագործից էր ու խաղաղ ժամանակ աշխատում էր «Նովայա վրեմյա»-ում³⁹ ու իր հոգվածներով հայտնի էր որպես կատաղի հակահայ: Տառապում էր խլությանը: Չէր լսում նույնիսկ գնդակի թռիչքի ձայնը և որի պատճառով դժվար էր նրա հետ խոսել: Այն բանից հետո, երբ Քալանթարյանը անզգուշաբար նրան հրեց շուկայում, Բերեզովսկին կոպտորեն դիմեց Քալանթարյանին: Քալանթարյանը ներողություն խնդրեց, իսկ Բերեզովսկուն թվաց, թե նա նրան պատասխանել է, «որ բավական չէր նրան հրել, այլ պետք էր հարվածել»: Բերեզովսկին զեկուցեց գեն. Չեռնոզուբովին այդ ոգով: Չեռնոզուբովը գործը քննելու փոխարեն հրամայեց ձերբակալել Քալանթարյանին ու հանձնել գնդային դատարանին:

35 Այդ ամենի հետևում կանգնած էր հատկապես Ռուսաստանի ՆԳ նախարարությունը, որն ամեն կերպ բորբոքում էր հայախայացությունը ոչ միայն հասարակության տարբեր շերտերում, այլև գործող բանակում: Կովկասյան բանակի կազմում կային սպաներ, որոնք մասնակցել էին Իրանական հեղափոխության ծննդնայր (1905-1911 թթ.): Հայտնի է, որ այդ հեղափոխությանը ակտիվորեն մասնակցել են նաև ՀՅԴ գործիչները: Նման սպաներից էր շտաբս կապիտան Կ. Սմիռնովը, որը 1915 թ. կնոջը ուղված նամակներից մեկում ամերիկահայ կամավորներին անվանում էր «ավագակախումբ»: Նմանապես նա բացասաբար էր արտահայտվում Դրոյի և նրա մարտիկների մասին, տես **Ter-Oganov Nugzar K.**, Letters from Officer, Orientalist K.N. Smirnov from the Caucasian Front as a Source for the Study of the Military/Political Situation in Turkey and Iran in 1914-1917, "Voennyi Sbornik", 2014, Vol. (6), N 4, էջ 212, 229, http://ejournal6.com/journals_n/1418320684.pdf. 1915 թ. մայիսի 15-ին ՆԳ նախարարությունը բանակի Գերագույն գլխավոր շտաբ ներկայացված զեկուցագրում խեղաթյուրելով փաստերը, վարկաբեկում էր կամավորական շարժումը և անգամ Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Գաշկովին: Ավելին, ՆԳ նախարարությունը առաջարկում էր քննարկել հայ կամավորական ստորաբաժանումների լինելու անհրաժեշտությունը, պնդելով, որ նրանց գոյությունը վտանգում է հարևան ժողովուրդների հետ ունեցած «բարեկամական» հարաբերությունները, ուստի անուղղակի կերպով առաջարկում էր կամավորներին զինաթափել: Սակայն, ՆԳ նախարարության առաջարկը մերժվեց, որը հիմնավորեց Կովկասյան բանակի շտաբը: Վերջինիս կարծիքով վերը նշված որոշման ընդունումը «հավասարագոր է հակառակորդի դեմ կռվում գտնվող և արժեքավոր մարտական հատկություններ ցուցաբերած հայկական դրուժինաների լուծարմանը», տես **Корсун Н.**, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны 1915 г., Москва, 1940, Приложение 4, էջ 189:

36 Պատմաբան Հրաչիկ Սիմոնյանի բնորոշմամբ՝ «Անդրանիկն ամենից առաջ ֆիդայի էր, հայդուկապետ, հետո զորավար», տես **Սիմոնյան Հր.**, Ջորավար Անդրանիկ (Ընդհանուր բնութագրական), ՊԲՀ, 2000, N 1, էջ 47:

37 **Աշխարհբեկ Լոռու Քալանթար** (1884-1942), հայագետ, հնագետ, պատմաբան, պրոֆեսոր: 1903 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1911-ին՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը՝ աշակերտելով Ն. Մառին: Մասնակցել է հայոց միջնադարյան մայրաքաղաք Անիի պեղումներին և վիճակագրական արձանագրությունների հավաքմանը: Մասնակցել է կամավորական շարժմանը: 1917 թ. Ն. Ադոնցի հետ գործուղվել է Վան՝ քաղաքում և շրջակայքում սեպան լուծարման գործունեությունները ուսումնասիրելու և նորերը հայտնաբերելու համար: 1921-1937 թթ. Երևանի պետական համալսարանում դասավանդել է հնագիտություն և հայոց պատմություն:

38 **Շաուման Նիկոլայ Վիկտորի** (1860-?), գնդապետ, Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիոնի հրամանատար:

39 «Նովայա վրեմյա», ամենօրյա թերթ, որը լույս է տեսել Սանկտ Պետերբուրգում 1868-1917 թթ.: Սկզբնապես թերթն ուներ չափավոր ազատական հայացքներ. սակայն սկսած 1876 թ., երբ նրա հրատարակիչը դարձավ Ալեքսեյ Սուվորինը, վերածվեց ծայրահեղ հետադիմական թերթի, որը քարոզում էր մեծապետական շովինիզմ:

Քալանթարյանի ընկերները օգնության խնդրանքով դիմում են գնդապետ Շաումանին, և բացատրում խնդրի էությունը: Շաումանը լավ հարաբերություններ ուներ Չեռնոգորովի հետ: Նա գնաց նրա մոտ ու բացատրեց գործի էությունը: Միայն դրանից հետո Չեռնոգորովը կասեցրեց իր կարգադրությունը: Չեռնոգորովն ինքն էլ որոշ տարօրինակություններ ուներ: Մեկ անգամ նա ինձ կանչեց իր մոտ և ասաց, որ իրեն լուրեր են հասել, որ որոշ սպաների մոտ իրենց կանայք են եկել, որն անթույլատրելի է: Ես, իհարկե, չհամարձակվեցի մատնանշել, որ իր կինը իր հետ է ապրում, ուստի զեկուցեցի, որ սպայությունն ազատ ժամանակն անց է կացնում ընտանիքում, առավել ևս մարտական գործողություններում դադար է, որն ավելի լավ է քան մոլախաղեր խաղալ ու հարբել: Չեռնոգորովի կինը նույնպես աջակցեց այդ ոգով: Ինձ թվաց, որ նա համաձայնվեց իմ փաստարկներին, սակայն չէի հասցրել վերադառնալ ինձ մոտ, երբ թուղթ (հրաման) ստացա, որտեղ ինձ տեղեկացվում էր, որ նա [Չեռնոգորովը] տեղեկություն է ստացել, որ ջոկատ են եկել սպաների կանայք, ուստի նա կարգադրում է նրանց վտարել: Ես դրան [կարգադրությանը] անմիջապես պատասխանեցի, որ իմ հրամանատարության տակ գտնվող ջոկատը տեղակայված է գյուղերում և այդ գյուղերի տարածքում ոչ մի կին չկա: Մրանով ավարտվեց այդ գործի հետ կապված գրագրությունը: Հավանաբար նա չէր ցանկանում իր վրա վերցնել կանանց վտարումը և ցանկանում էր, որ նախաձեռնությունը ինձնից լիներ, այլ կերպ չեմ կարող բացատրել:

Ապրիլի սկզբներին Թավրիզից պահանջեցին Կովկ. 8-րդ հրաձգ. գնդի մեկ գումարտակ, որի ժամանումից հետո ես ստուգեցի ու պարզեցի, որ գումարտակում չկա շտաբ-սպա⁴⁰: Այդ ժամանակ ես հարցրեցի գնդի հրամանատարին, թե ինչու նա չի ուղարկում շտաբ-սպային: Նա ինձ պատասխանեց, որ կապիտան Եգուպովը իր որակական հատկություններով չի զիջում շտաբ-սպային, որը և հաստատվեց հետագայում:

Մեկօրյա հանգստից հետո այդ գումարտակը գեներ. Չեռնոգորովն ուղարկեց ք. Դիլման՝ ուժեղացնելու Նալգիսյան ջոկատը: Այսպիսով, ապրիլի սկզբին Ադրբեյջանական ջոկատը տեղակայված էր հետևյալ կարգով՝ Կովկ. 5-րդ հրաձգ. գունդը Ջուլֆայում, Կովկ. 8-րդ հրաձգ. գունդը (2 գումարտակ), թեթև մարտկոցը և Կուբանյան կազ. գնդի 3-րդ հերթի 3 հարյուրյակներ Թավրիզում, Խոյում և շրջակայքում՝ Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 2 գումարտ., հետևակ սահմանապահների 4 հարյուրյակ, 1 լեռն. մարտկոց, Մունժենյան կազ. գունդը և Թամանյան 3-րդ հերթի և Կուբանյան կազ. գնդի 1 գումարտ. և Հայկական դրուժինան, Կոթուրի ձորի մոտերքում՝ Կովկ. 7-րդ հրաձգ. գնդի 2 գումարտ., լեռնային մարտկոց և Թամանյան կազ. գնդի 3-րդ հերթի 3 հարյուրյակներ և վերջապես ք. Դիլմանում՝ Կովկ. 6-րդ գնդի 1 գումարտ., Կովկասյան 8-րդ հրաձգ. գնդի 1 գումարտ., 1 լեռնային մարտկոց և Պոլտավյան կազ. գունդը:

Ապրիլի 10-ին ես հրաման ստացա 7-րդ հրաձգ. գնդի 2 գումարտ. լեռնային մարտկոցով ու Թամանյան կազակ. գնդի 3 հարյուրյակով ուժեղացված հետախուզում կատարել Կոթուրի կիրճը և պարզել, արդյո՞ք հակառակորդը գրավել է Կոթուրը, այդպիսի հանձնարարություն ստացավ գնդապետ Նալգիևը, սակայն Դիլմանից հարավի՝ թուրքական սահմանի և ք. Ուրմիայի ուղղության վերաբերյալ:

Ապրիլի 11-ին ես իմ ջոկատով մտա Կոթուրի կիրճը: Այդ կիրճով առաջխաղացումը դանդաղ էր ընթանում հակառակորդի կրակի հետևանքով, սկսած Դերա-Կավչուրի գետակի Կոթուր-չայի միախառնման վայրից: Մի տեղում հետախուզական ջոկատի պետ, գնդապետ Օբրագցովը ուշացրեց Կոթուր-չայ գետակի ձախ ափն ուղարկել փոքրիկ զորամաս, որը կապահովեր ձախ թևը: Հակառակորդն օգտվեց մեր վրիպումից, գրավեց բարձրունքները ու սկսեց գնդակոծել կիրճով շարժվող ջոկատը: Ժամանակավոր խառնաշփոթ սկսվեց: Կոթուր-չայ գետակն այդ հատվածում շատ բուռն էր և հոսքն արագ: Ծանծաղուտով անցնել հնարավոր չէր ո՛չ

40 Ռուսական բանակի սպայական ավագ աստիճան:

հետիոտնին, ո՛չ էլ հեծյալին: Բացի այդ, ջոկատի պետը կազակներին ուղարկել էր գետակի աջ ափով: Ստիպված ժամանակավորապես դադարեցրի հետագա առաջ-խաղացումը: Այդ ծանր ռուպեին օգնության հասավ շտաբի կապի պետ, պորուչիկ Մամալիզան: Նա ընտրեց Կոթուր-չայի ամենանեղ հատվածը, երկու պատգարակներ ամուր կապեց ու պարանների օգնությամբ մյուս ափը նետեց ծայրերը: Այսպիսի կանուրջով նա առաջինը անցավ հաջորդ ափը, իսկ նրա ետևից, մեկ առ մեկ, անցավ զինվորների դասակը: Այդ կերպ պորուչիկ Մամալիզան օգնեց ջոկատին առաջանալ:

Մեր հետագա առաջացման ժամանակ թուրքերը ձգտում էին ավելի ուժեղ դիմադրություն ցույց տալ, հատկապես Ջերի և Մախնի գյուղերի միջև, սակայն այստեղ Կոթուր-չայ գետակն արդեն անցանելի էր և հակառակորդի աջ թևի վրա առաջացման ու հրետանային կրակի օգնությամբ մեզ հաջողվեց նրան հետ մղել և հետապնդել մինչև Կոթուր, և ապա այն գրավել: Ջոկատը գիշերակացի տեղավորվեց կիրճում: Ես հրաման ստացա թողնել ջոկատը գնդապետ Օբրագցովի հրամանատարության տակ և անձամբ շտաբի պետի հետ գալ Խոյ: [Ապրիլի] 14-ին եկա Խոյ ու ներկայացա գեներ. Չեռնոզուբովին: Նա խիստ հուզված էր և ինձ խնդրեց անմիջապես մեկնել Դիլման, քանի որ իր կարծիքով այնտեղ ինչ որ բան է տեղի ունենում:

Ես սկսեցի նրան հանգստացնել, առանձնապես վտանգավոր ոչինչ չի կարող լինել, քանի որ գնդապետ Նալգինը վերջերս ուժեղացված հետախուզություն է կատարել և հակառակորդ չի հայտնաբերել: Նրան խնդրեցի գոնե մեկ օր մնալ Խոյում՝ շտաբի տնտեսական գործերը ստուգելու համար: Նա համաձայնվեց, միայն թե ես մնամ մինչև [ապրիլի] 16-ի ժամը 12-ը, որից հետո անմիջապես մեկնեմ: Այդպիսի հապճեպությունը բացատրվում էր գործերի դրության չափազանց կարևորությամբ, որն առաջացել էր Վանում⁴¹, ուր ես պետք է հետևեի իմ գորամասերով:

Իմ գորամասի արևմուտք ուղարկելու լուրերը չհաստատվեցին, ապրիլի 14-ին 5-րդ հրաձգ. գունդը Ջուլֆայից տեղափոխվեց Խոյ, իսկ ապրիլի 15-ին 6-րդ հրաձգ. գունդը (2 գումարտ.) ուղարկվեց Դիլման: Այնտեղ պետք է ուղարկվեր [ապրիլի] 16-ին 5-րդ հրաձգ. գունդը: Նախատեսվում էր, որ ես այդ գնդերով, Չուխ-Գյաղուկ լեռնանցքով պետք է շարժվեի Վան: Այդ ժամանակ մյուս ջոկատը՝ գեներալ Նիկոլանի⁴², գտնվում էր Բայազետում:

1915 թ. ապրիլի 7-ին⁴³ սկսվում են Վանի իրադարձությունները: Դրանք առաջացան այն պատճառով, որ մի շարք դեպքեր, որոնք տեղի ունեցան Թուրքիայում պատերազմի սկզբում, լցրեցին Վասպուրականի հայերի համբերության բաժակը: Հայ առաջնորդներից Իշխանը⁴⁴, իր երեք ընկերների⁴⁵ հետ նեճգաբար սպանվեցին Հայոց ձորի Հիրձ գյուղում վալի⁴⁶ Ջևդեթ⁴⁷ փաշայի հրամանով, երբ նրա խնդրանքով

41 Նկատի ունի 1915 թ. ապրիլի 7-ին սկսված Վանի ինքնապաշտպանությունը:

42 **Նիկոլան Անդրեյ Միխայիլի** (1858-1926), գեներալ, Բայազետի ջոկատի (Առանձին Անդրկասպյան կազակային բրիգադի) հրամանատար, Վանի և ազատագրված շրջանների կայագորի պետ (1915 թ. մայիս-հուլիս):

43 Գեներալի հուշերի այս հատվածը տպագրվել է ռուսերեն, որտեղ նկարագրվում է Դիլմանի ճակատամարտը, տե՛ս **Саакян Рубен**, Роль генерала Т. Назарбеяна в битве под Дильманом 1915 года (По архивным материалам), ՊԲՀ, 2016, N 2, էջ 215-229:

44 Պողոսյան Նիկողայոս (Նիկոլ, Իշխան, Վանա Իշխան, 1883-1915), ազատագրական շարժման նշանավոր գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ: Վանում գտնվող ամերիկյան միսիոներների կարծիքով Իշխանը սպանվեց Ջևդեթի կողմից, որովհետև ռազմական մարտավարության մեծ և հմուտ գիտակ էր, տե՛ս **Ussher C. D., Knapp G. H.**, An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, Boston and N. Y., 1917, էջ 237:

45 Այդ երեք ուղեկիցներն էին՝ Պողոս Թուրունջյանը (Քոթոթ Պողոս), Միհրան Տեր-Մարգարյանը և Վահան Խոսնայանը: Այս սպանությունը հետաքննել է ժամանակի հասարակական գործիչ Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան): Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս նաև՝ **Սահակյան Ռուբեն**, Ա-Դոնի հուշերը Օսմանյան սեջլիսի պատգամավոր Արշակ Վռամյանի սպանության մասին, ԲՀԱ, 2017, N 125, էջ 3-20:

46 Նահանգապետ:

47 Երիտթուրքական կուսակցության անդամ և Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էսվեր փաշայի քրոջ ամուսինը՝ Ջևդեթ բեյը հայտնի էր «Բաշկալեի պայտագործ» անվամբ, քանի որ սովորություն

գնում էին Շատալխ, որպեսզի հանգստացնեն ընդվզած բնակչությանը⁴⁸: Վասպուրականի հայ բնակչությունը չէր ցանկանում այլևս իրենց որդիներին տալ կառավարության դահիճների ձեռքը, այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ ճամբարում նրանց մի մասը գնդակահարվել է այն կասկածով, թե իբր նրանք չեն ցանկանա կռվել Քեռիի և Անդրանիկի դեմ⁴⁹: Բացի այդ, Այգեստան օկրուգում⁵⁰ բնակվող թուրք ասքյարները⁵¹ հարձակվել էին Շուշաբենդ⁵² գյուղի հայուհիների վրա՝ բռնաբարելու նպատակով և իսկապես շատերին բռնաբարել էին: Այս պայքարում, հանուն ինքնապաշտպանության, վանեցիները հանդես եկան անհավասար ուժերով: Թուրքերն ունեին 6-8 հազար ռազմիկ, 4 թնդանոթ⁵³ ու մեծ քանակությամբ զինամթերք: Ք. Վանի տների պատերը և այգիների ցանկապատները կառուցված էին չթրծված աղյուսից ու կավից, նրանք չէին կարող հուսալի արգելք լինել ոչ միայն արկերի, այլև նույնիսկ գնդակների համար: Աշխատանքներում ընդգրկվում են բոլոր բնակիչները, որոնք քանդված պատի տեղում, հենց նույն գիշերը, նորն էին կառուցում, որոնք բոլոր հարմարություններն ունեին Ջևղեթ փաշայի դեմ պայքարելու համար: Այգեստան, Վանի կենտրոն⁵⁴ և Շատալխ՝ այդ երեք հենակետներն էին դիմագրավում և թուրքական ձիգերը ընկճել նրանց՝ առայժմ մնում էին անարդյունք⁵⁵: Քանի դեռ քաջարի Վանը դիմանում էր պաշարմանը, Ադրբեջանում Դիլման քաղ. մոտ տեղի ունեցավ հետևյալ իրադարձությունը:

Ապրիլի 16-ին դեռ չէի հասցրել արթնանալ, երբ զեկուցեցին, որ 7-րդ գնդի կառքը սպասում է և, որ գեներ. Չեռնոգուրովը ինձ խնդրում է անհապաղ մեկնել Դիլման: Հարկադրված էի կատարել ջոկատի պետի կարգադրությունը: Առավոտյան ժամը 9-ին, իմ շտաբի պետ, գնդապետ Պոլտավցևի հետ մեկնեցի, հրամայելով իմ հեծկան ձին և արշավային բեռնապարկն ուղարկել իմ ետևից Դիլման: Անցնելով Խոյով, ես ցանկացա այցելել քաղաքի նախկին պարետ, ռոտմիստր⁵⁶ Սկրիպինին, որը բծավոր տիֆ էր տարել: Ցերեկվա ժամը 12-ի մոտ ես արդեն Կարաթեփե լեռնանցքում էի, այնտեղ Կարմիր խաչի առաջապահ ջոկատի վաչկատներում կազմակերպված էր սննդակետ, ուր և մեզ հրավիրեցին այցելել ու նախաձաշել: Ես համաձայնվեցի և այցելեցի: Այնտեղ ինձ հայտնեցին, որ վերջերս անցել է 5-րդ

ունը զոհերին պայտել: Վանից փախչելուց հետո Ջևղեթը մասնակցում է Բաղեշի և Սուշի հայության կոտորածին, տես **Nogales R. de**, *Four Years Beneath the Crescent*. Transl. from Spanish by M. Lee. With an introd by Lieut.-Col. E. Davis, London, 1926, էջ 135, տես նաև **Բասենցյան Ա. Գ.**, Հայերի կոտորածները Բիթլիսի նահանգում օսմանյան բանակի և այլ զինված կազմավորումների կողմից (1915 թ.), ՀՀ ԳԱԱ «Լրագրեր» հաս. գիտ., 2018, N 1, էջ 13-14:

48 Շատալխի հայության ընդդիմության պատճառը տեղի ազդեցիկ ՀՅԳ գործիչ, ուսուցիչ Հովսեփ 20-րդանի ու 5 համախոհների մարտի 29-ի անհիմն ձերբակալությունն էր: Ի պատասխան թուրք-քրդական հարձակումների տեղի բնակչությունը, սկսած 1915 թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 14-ը դիմեց ինքնապաշտպանության:

49 Իրականում Վանի իշխանություններն իրականացնում էին հայության ցեղասպանության քաղաքականությունը և նման ու այլ «փաստարկներով» ցանկանում էին արդարացնել իրենց հայաջինջ գործողությունները: Որպես փաստ վկայակոչենք Վանում և նահանգում երկար տարիներ գործունեություն ծավալած ամերիկացի միսիոներների հուշերը, որտեղ նրանք վկայում են, որ Մարիդամիջի ձակատամարտին (1914 թ. դեկտեմբեր-1915 թ. հունվար) մասնակցած թուրք զեներայիններից մեկը նահանգապետ Ջևղեթին շնորհակալական հեռագիր էր հղել Վանի նահանգից զորակոչված հայերի սխրագործությունների համար, տես **Ussher C. D., Knapp G. H.**, նշվ. աշխ., էջ 217: Նշենք մեկ այլ փաստ. Բալկանյան պատերազմների թուրքական բանակի կազմում կռվել են 8 հազար օսմանահպատակ հայեր: Օսմանյան կայսրությունում բրիտանական դեսպանի վկայությամբ, հայերը «կռվում էին ավելի լավ, քան ուրիշ այլազգի զինվորները», տես **Սահակյան Ռ. Օ.**, Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Եր., 2005, էջ 103:

50 Վան քաղաքը բաղկացած էր երկու թաղամասերից՝ Այգեստան (23000 հայ) և Քաղաքամեջ (2500 հայ): Նրանց միջև ընկած տարածքում բնակվում էին մահմեդականներ, հիմնականում՝ թուրքեր:

51 Թուրք զինվորները չէին բնակվում Այգեստանում, այլ շրջապատել էին թաղամասը:

52 Շուշանց:

53 Կային նաև մի քանի տասնյակի հասնող ողորկավոր թնդանոթներ: Հետագայում Էրզրումից լրացուցիչ ուղարկվում են հետևակի 2 գումարտակ և 4 լեռնային թնդանոթ, տես **Սահակյան Ռ. Օ.**, նշվ. աշխ., էջ 193:

54 Քաղաքամեջ:

55 Վանի ինքնապաշտպանության մասին ավելի մանրամասն տես **Ա.-Պո**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Եր., 1917:

56 Սպայական կոչում հեծելագործում, որը հավասարագոր և հետևակի կապիտանի աստիճանի:

հրաձգ. գունդը, և նրանք նրանց հյուրասիրել են: Չցանկանալով նեղել գնդին զորա-
երթի ժամանակ և որևէ վտանգ չկանխատեսելով, ես դիտավորյալ չափից ավելի
երկար մնացի Կարմիր խաչի առաջապահ ջոկատում: Այնտեղից դուրս եկա ժամը
2–ին: Այնուամենայնիվ, ստիպված եղա առաջ ընկնել 5–րդ գնդից, և երբ ես իջնում
էի Կարաթեփեի լեռնանցքից նկատեցի հեծյալների խումբ: Պարզվեց, որ դա Դիլ-
մանի նահանգապետն էր իր շքախմբի ու պահակախմբի հետ: Երբ նրանք մոտեցան
ինձ ես կանգնեցրի կառքը ու հարցրեցի, թե բանն ինչումն է: Նա ինձ ասաց, որ
թուրքերը մրբակոծում են Դիլմանը: Այնուամենայնիվ, ես հակված էի մտածել, որ
գնդապետ Նալգիևի հետախուզության հիման վրա որևէ լուրջ բան չկա և ասացի
նրան, որ այսօր երեկոյան Դիլմանում նրա հյուրն են լինելու: Նա այդ ժամանակ
ինձ հարցրեց, ուրեմն ինքը վերադառնա՞մ: Ես, ի համաձայնության, գլխով արեցի և
ինքս շարունակեցի ճանապարհը, իսկ նա չհետևեց ինձ ու սլացավ դեպի Խոյ:

Արդեն լեռնանցքից իջնելիս ես սկսեցի հանդիպել փախստականների հետ
խառնված Կարմիր խաչի բեռնասայլերի, գթության քույրերի և մեծ թվով շարքա-
յինների, որոնք իբր ուղեկցում են վիրավորներին, որոնց թիվը մարտադաշտին
մոտենալիս աճում էր: Ականատես լինելով նման տեսարանի, ես, իհարկե, իջա
կառքից: Կանգնեցնելով բոլոր առողջ շարքայիններին, ոգևորելով նրանց ու շտաբի
սպաների օգնությանը նրանց կարգի բերելով, ես նրանց հետ միասին ուղղվեցի
Մուխանջիկ գյուղի հարավային կողմը, նրանց մատնացույց անելով խրամատների
համար տեղը ու հրամայեցի սկսել աշխատանքները: Այս կերպ ինձ ինձ հաջողվեց
հավաքել մոտ 2 վաշտ: Տեսնելով շտապ հեռացող 2–րդ լեռնային մարտկոցը, ես
նրան հրամայեցի դիրքեր գրավել Մուխանջիկ գյուղից հարավ և անմիջապես կրակ
բացել հարձակվող հակառակորդի վրա: Չէի հասցրել հեռանալ հրետանուց, երբ
նա կրկին ճանապարհ ընկավ ու սկսեց նահանջել: Դրա պատճառը բաց դիրքն էր
և մոտիկ պայթած հակառակորդի մի քանի արկերը: Ես կրկին նրան իրետանային
հաշվարկը կանգնեցրի և այստեղ գտնվող հրաձիգների ոգին բարձրացնելու հա-
մար կրկին հրամայեցի բաց դիրք գրավել ու կրակ բացել հակառակորդի և նրա
հրետանու վրա: Մեր մի քանի հաջող դիպած արկերից հետո, հատկապես, երբ
պայթեց թշնամուլ լիցքավորման արկը, հակառակորդը ժամանակավորապես թու-
լացրեց կրակը:

Սկսեց մթնել: Ոչ մեկից չկարողացա իմանալ, թե որտեղ է գտնվում ջոկատի
հրամանատարը: Այդ ծանր պահին ես նկատեցի առաջացող ոչ մեծ զորամաս:
Պարզվեց, որ դա Հայկական դրուժինայի վաշտն էր Սմբատի⁵⁷ գլխավորությամբ,
որը մեկ օր առաջ Կարաթեփե լեռնանցքից ուղարկվել էր սովորական հետախու-
զության արևմուտք՝ դեպի գյուղ Խանիկը: Ես հրամայեցի Սմբատին դիրքեր գրավել
Մուխանջիկից հարավ–արևելք, խրամատավորվել և զսպել մեր ձախ թևը շրջանցող
ու մեր թիկունքը անցնելու ձգտող հակառակորդին: Սմբատին հրամայեցի մեռնել,
սակայն չնահանջել:

Հրաման ուղարկեցի 5–րդ հրաձգ. գնդի հրամ. Դոկուչանին կանգ առնել Շարի-
Կոնյանի գծի վրա և եթե այն դեպքում, երբ հնարավոր չի լինի հակառակորդին
կանգնեցնել՝ Մուխանջիկի տակ դիրքեր գրավել: Այնտեղ ես տեղակայեցի Մուն-
ժենյան կազ. գունդը: Վերջապես ես տեղեկություն ստացա, որ 6–րդ գնդի հրամա-
նատար, գնդապետ Տրեդենսկին գտնվում է գյուղ Մուխանջիկի և քաղ. Դիլմանի
միջև:

Գիշերը, ուժեղ կրակի տակ ես իմ շտաբի պետի հետ շարժվեցի դեպի Դիլման,
որպեսզի պարզեն իրավիճակը և որևէ տեղեկություն իմանամ հակառակորդի մա-
սին: Այդ կերպ ես հասա մինչև 669 բլուրը, որտեղ, ըստ նահանջող մարդկանց
տեղեկության, գտնվում էր Կովկ. 6–րդ հրաձգ. գնդի հրամանատարը: Նշված բլրի
մոտ ես պարզեցի, որ քաղաքից և զորանոցներից հյուսիս թուրքերի մարտական

57 **Քորոյան Սմբատ** (1881–1956), ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ: Կամավորական խմբի պետ Անդրանիկի տեղակալն էր:

գործողությունները դադարել են մեր 2-րդ մարտկոցի գործողությունների շնորհիվ, սակայն Բելաջիկ գյուղից հյուսիս առաջանում են հակառակորդի խիտ շղթաները: Ես, սակայն, հույս ունեի, որ նրանց կկանգնեցնի Հայկական դրուժինայի վաշտը, որն ամբողջությամբ արդարացրեց իմ վստահությունը: Դրուժինիկները մի քանի անգամ ձեռնամարտի բռնվեցին հակառակորդի հետ: Շնորհիվ Մմբատի կորովի և անվեհերության, հակառակորդի բոլոր հարձակումներն ի դերև եղան, որից հետո արդեն հակառակորդը կանգնեցրեց իր հարձակումը և ետ քաշվեց:

Այդ ժամանակ գնդապետ Տրեդենսկին արցունքն աչքերին ինձ գեկուցեց, որ ինքն է ջոկատի պետը, չնայած, որ աստիճանով բարձր է Նալգիևից (այդ հանգամանքը ինձ խիստ զարմացրեց), ինչպես նաև այն, որ ինձ ուղարկելով Դիլման, իրեն այդ մասին չէին նախագգուշացրել, քանի որ Չեռնոզուբովի հեռագրի համաձայն իրեն հրամայված էր ենթարկվել Նալգիևին: Թե որտեղ է գտնվում Նալգիևը նա ստույգ չգիտեր, ինչպես նաև չգիտեր, թե ինչ է կատարվում շուրջբոլորը և, որ նա որոշել էր իր մնացած հրաձիգներով այստեղ մեռնել: Նա միայն գիտեր, որ Նալգիևի գունդը իր մեկ գումարտակի, 8-րդ գնդի գումարտակի ու ջոկատի շտաբից գործուղված Գլխավոր շտաբի⁵⁸ կապիտան Զինկևիչի⁵⁹ հետ ուղղվեց հարձակվող հակառակորդի ձախ թևի վրա: Ես հրամայեցի գնդապետ Տրեդենսկուն, չնայած նրա ջոկատի ծայրահեղ թուլությանը և ուժեղ հոգնածությանն ու պահեստագործի բացակայությանը, համառորեն պահել իրենց զբաղեցրած դիրքերը: Ապա ես անցա Մուխանջիկի մոտ: Այստեղ ես տեսա հեծյալ կազակի, որը գալիս էր գնդ. Նալգիևի հրամանով ուղղված Տրեդենսկուն այն մասին, որ ինքը նեղում է հակառակորդին և խնդրում է իրեն աջակցել: Զարմանալի է այն հանգամանքը, որ ջոկատի հրամանատարը թողել էր մարտի ու ճակատի ընդհանուր ղեկավարությունը, իսկ ինքը հրապուրվել էր շրջանցիկ գորապյունով:

Իհարկե, հակառակորդի գիշերային գործուն հարձակման ղեկքում աղետն անխուսափելի կլիներ, սակայն գնահատելով իրադրությունը՝ գնդապետ Նալգիևի առաջ ընկած դիրքը, գնդապետ Տրեդենսկու կողմից Դիլմանը թողնելը, հակառակորդի ուժերի ծայրահեղ գերազանցությունը, մեզ մոտ պահեստագործի բացակայությունը, ոգու անկումը և ուշ ժամը, ես գնդ. Նալգիևին նկարագրեցի իրավիճակը, հայտնեցի, որ ես եմ ստանձնում ջոկատի հրամանատարությունը, ուստի նրան հրամայում եմ անհապաղ նահանջել գյուղ Մուխանջիկ: Նման հրամանով մի քանի կամավորների (окопник)⁶⁰ ուղարկեցի ձախ թև Պոլտավցիների 2 հարյուրյակներին և աշխատել հասնել Ալեքսանդր Մակդոնացու հուշարձանի մոտ թուրքերի կողմից շրջապատման մեջ գտնվող 6-րդ գնդի հետախույզների ստորաբաժանման պետ, պորուչիկ Քոյատելաձեին: Սպասելով [օգնական] գործին ես ընտրեցի դիրքը, որի մարտավարական բանալին 763 բարձրունքն էր: Շտաբի պետի հետ սկսեցի կազմել գործի դիրքավորման պլանը:

Երեկոյան ժամը 10-ին եկավ կապ. Եգուպովի (8-րդ գնդի գումարտակի հրամանատարը) ջոկատը, կազմված 8-րդ հրաձգ. գնդի 1 ½ [գումարտակ] և 2 գնդացիներիով, որը մի ամբողջ օր պաշտպանում էր Պիլս-Գաուշը: Նրան հրամայվեց արշավույսին՝ ապրիլի 17-ին իր գումարտակի հետ գրավել 763 բարձրունքը և ոչ մի

58 Նշանակում է, որ ավարտել էր Բուսական կայսրության Գլխավոր շտաբի Նիկոլայան կայսերական ակադեմիան (1832-1918): Բարձր գնահատականներով ավարտած շրջանավարտները բացառապես ծառայում էին զորամասերի շտաբերում:

59 **Զինկևիչ Միխայիլ Միխայիլի** (1883-1944/45), ռուս զինվորական, գնդապետ (06.12.1916), գեներալ-մայոր (1920): Հայկական դիվիզիայի շտաբի պետ (1918), ՀՀ Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար (18.04.1919): Գեներալ Ա. Դենիկինի կամավորական բանակի ներկայացուցիչը ՀՀ-ում: Նրա նախաձեռնությամբ ՀՀ-ում կազմակերպվել է սպայական դպրոց կամ «Գլխավոր շտաբի դասընթացներ», տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 107: Երկրորդ աշխարհամարտի տարիներին համագործակցել է գերմանացիների հետ ծառայության անցնելով այսպես կոչված Բուսական կորպուսում: Սպանվել է հարավսլավացի պարտիզանների դեմ մղված մարտերից մեկի ժամանակ:

60 Այդպես էին անվանում այն զինծառայողներին, որոնք կամավոր հանձն են առնում կատարել վտանգավոր առաջադրանք:

դեպքում այն չգիշերել:

Ի ուրախություն, կեզգիշերին ժամանեցին Պոլտավյան կազ. գնդի երկու հարյուրյակներ անապատային ավազ⁶¹ Ալեքսանդրովի հրամանատարությամբ, որն ինձ գեղուցեց, որ մթնոլորտային վրա հասնելով 6-րդ գնդի հետախույզների հաջողվել է ձեռքերը թուրքական շղթան և նրանք գալիս են իրենց ետևից: Շուտով և այդ ստորաբաժանումը ժամանեց: Ստանալով հաղորդում, որ գնդ. Նալգիևը սկսել է իր նահանջը, ես հրամայեցի այդ նահանջն ապահովելու համար գրավել Ադրիվան լեռը: Գիշերը հեռագրեցի գեներ. Չեռնոգուբովին խնդրելով ինձ հանձնել Կովկ. 5-րդ հրաձգ. գունդը: Շուտով ստացվեց պատասխանը, որ ինձ անհրաժեշտ բոլոր զորքերը ես կարող եմ վերցնել իմ հրամանատարության տակ: Խոստացավ ուղարկել 7-րդ գնդի ևս երկու վաշտ ու Հայկական կամավորական դրուժինան: Գիշերը ժամը 1-ին եկավ գնդ. Նալգիևի ջոկատը: Այսպիսով գիշերը կենտրոնացվեց ողջ ջոկատը: Այն ժամանակ ես հրամայեցի նաև գնդապետ Տրեդենսկուն նահանջել դեպի Մուխանջիկ՝ թողնելով պահակային պահպանություն և գաղտնապահակներ:

Դիրքավորման պլանի համաձայն, գիշերը, բոլոր զորամասերը զբաղեցրին իրենց նշված տեղերը: Ողջ գիշեր ընթացում էին դիրքերի ամրացման աշխատանքները: Ես անձամբ շրջում էի դիրքերը՝ ղեկավարելով աշխատանքներն ու քաջալերելով մարդկանց: Լուսաբացին հասակի բարձրության հասնող խրամատները պատրաստ էին (գետինը շատ փափուկ էր) և նույնիսկ փորվել էին պահեստային խրամատներ ձակատի երկարացման դեպքում:

Մարտագիծն ընտրվել էր գյուղ Մուխանջիկի հարավային ծայրամասի ետևում և այդ գյուղից արևելք գտնվող 763 բարձրունքը: Գյուղ Մուխանջիկի առջևում՝ խրամատներում դիրքավորվել էին 6-րդ գնդի երկու գումարտակ և Հայկական դրուժինայի վաշտը, 763 բարձրունքը գրավել էր 8-րդ հրաձգ. գնդի գումարտակը: Պահեստագործ՝ 5-րդ և 6-րդ գնդերի մեկական գումարտակ, 5-րդ հրաձգ. գնդի 2 գումարտ. և Մունժենյան կազակ. գունդը գտնվում էին Մուխանջիկ գյուղի հյուսիսային ծայրամասի ետևում ու հանդիսանում էին Շարի-Կանյանի գծի վրա խորքային պահեստագործ: Հրետանին գաղտնի դիրք գրավեց Մուխանջիկ գյուղից հյուսիս-արևելք: Աջ թևը պաշտպանելու և դիտարկելու համար վարվա և Շեյդան գլուղերն ուղարկվեցին 5-րդ գնդի հետախույզները և Պոլտավցիների 3 հարյուրյակ, իսկ ձախ թևը՝ դեպի Կիզիլջա գյուղը պոլտավցիների հարյուրյակ:

Ապրիլի 17-ի լուսաբացին եկավ օգնական ուժ՝ 7-րդ հրաձգ. գնդի 2 վաշտ և Հայկական դրուժինայի երեք վաշտ: 7-րդ գնդի վաշտերը դիրքավորվեցին 8-րդ գնդից ձախ, իսկ դրուժինան այդ գումարտակից⁶² ձախ: Մեր զբաղեցրած դիրքերը մեզ համար լավ էին: Դիմանի և Մուխանջիկ գյուղի միջև ընկած ողջ տարածքը բաց էր բավականին զգալի թեքությամբ դեպի Դիման: Գյուղը և բարձրունքը լավ հենակետեր էին: Առավել խոցելի էր շրջանցման համար մեր աջ թևը՝ տեղանքի կտրտված բնույթի հետևանքով, իսկ ձախը խորը շրջանցիկ զորաշարժից շրջափակված էր Ուրմիա լճով: Հակառակորդի բոլոր հարձակումները և ձեռնարկվող շրջանցումները մեզ պարզ երևում էին:

Ի բարեբախտություն մեզ համար հակառակորդը [ապրիլի] 17-ին (ուրբաթ) չհարձակվեց, որի շնորհիվ մեզ ավելի լավ հնարավորություն տվեց էլ ավելի լավ նախապատրաստվել հանդիպմանը⁶³ և էլ ավելի ամրանալ ոգով ապրիլի 16-ի անհաջողությունից հետո: Նոր ժամանած զորամասերը անմիջապես սկսում են ամրացնել իրենց հանձնարարված դիրքերը: Հայկական դրուժինան չունենալով փոքր⁶⁴ բահեր, խրամատները փորում էր սվիններով (Ահա այս մարտում նրանք գնահատեցին փոքրիկ բահերը և մարտից հետո Ադրանիկը խնդրեց իր դրուժինայի համար տալ այդ բահերը և հետագայում դրանք միշտ օգտագործում էր):

61 Կազակային զորքի սպայական կոչում, որը հավասարագոր է հետևակի փոխգնդապետի կոչմանը:

62 Վաշտերից:

63 Ճակատամարտին:

64 Սակրավորական:

[Ապրիլի] 17-ին, լուսաբացին, մեր կողմն անցավ ազգությամբ հույն թուրք զինվոր, որը մեզ քիչ թե շատ մանրամասն տեղեկություններ հայտնեց հակառակորդի մասին: Ռազմագերիի, գնդապետներ Տրեդենսկոյ և Նալգինի հարցուփորձից պարզվեց հետևյալը՝ երկիրում [Պարսկաստանում], որտեղ յուրաքանչյուր պարսիկ իր ողջ էությունը, ընդհանուր առմամբ, ատում էր քրիստոնյաներին, թուրքերը կազմակերպել էին հոյակապ գաղտնի հետախուզություն⁶⁵: Իսկ թուրք գործակալների ազդեցությունը թույլ տվեց մեր հակառակորդին ստույգ իմանալ մեր զորքերի թվաքանակը և տեղակայումը, բացի այդ, մեր վստահությունը վայելող և մեր զորքերից գերազանց տեղեկացված լրտեսի գործունեությունը, որը հետագայում հաստատվեց թուրքերից գրավված փաստաթղթերից, համոզեց թուրքական ջոկատի պետին, որ ողջ պահեստագործ տարվել է Ջուլֆա լուստի կարելի է], կտրուկ հրաման տալ սրընթաց հարձակվել ու ձգմել Դիլմանի թույլ ջոկատը: Այն հաստատ համոզմունքը, որ իրենց առջև գտնվում են ռուսական թույլ ուժեր, փոխանցվել էր թուրքական հրամանատարի կողմից իր զորքերին, որի արդյունքն էին սրընթաց գրոհները, չնայած մեծ կորուստներին, որոնք ունեցան թուրքական զորքերը ապրիլի 16-ից 18-ը տեղի ունեցած մարտերի ժամանակ:

Ապրիլի 15-ի լույս 16-ի գիշերը Մամայան լեռից իջնելով Հալիլ բեյի ջոկատը⁶⁶, որը կազմված էր Կոստանդնուպոլսից ժամանած ու գերմանացի հրահանգիչների կողմից մարզված երրորդ հետևակային դիվիզիայից, որն ուժեղացվել էր Բաղդադի ռազմական տեսչության ժանդարմական զորամասերով, Ջևդեթ փաշայի ջոկատի մի քանի գումարտակներով, ինչպես նաև թուրքական ու պարսկական քրդերի ու պարսիկ կամավորների խառնամբոխով, մինչև հետևակի 16 գումարտակներով, կանոնավոր հեծելազորի 2 հեծելավաշտով, 8 թնդ. և 12 գնդացիներով և մոտ 5000-6000 քրդերով⁶⁷, սրընթաց ու անսպասելի գրոհեց Դիլմանից հարավ դիրքավորված մեր զորքերի վրա՝ ձգտելով գործուն ճակատային հարձակմամբ շրջանցել մեր ձախ թևը, կտրել Դիլմանի ջոկատը Խոյի հետ ունեցած հաղորդակցության ուղուց: Այդ մարտավարական շրջապատումը ավարտելու էր Քյազիմ բեյի ջոկատը, որը բաղկացած էր ժանդարմների մի քանի թաքուրներից⁶⁸ և քրդական ալայներից, որոնք շտապ կենտրոնանում էին Բուրուշ-Խորան լեռան մոտ: Ուժերի ահռելի գերազանցությունը և հանուն ճշմարտության՝ նշենք հակառակորդի հոյակապ պատրաստությունը և հանդգնության հասնող քաջությունը, չնայած գնդապետ Նալգինի մասնակի հաջողությանը մեր աջ թևում, հարկադրեցին ապրիլի 16-ին, ցերեկվա ժամը 2-ի մոտերքը նահանջել ք. Դիլմանից և մեր ջոկատից հարավ-արևմուտք գտնվող գյուղերից: Երբ նահանջող զորամասերն անցնում էին քաղաքով բնակիչները տներից կրակում էին նրանց վրա:

Հակառակորդի ճնշման տակ կատարվող մեր զորամասերի նահանջը բարդանում էր նաև այն պատճառով, որ անհրաժեշտ էր դուրս բերել Կարմիր խաչի լազարեթը վիրակապման ջոկատի հետ, անթել հեռագրի կայանը և դաշտային հացի փուռը, իսկ վերջինիս հետ մեր զորքերի պաշտպանության տակ քաղաքից ու շրջակա գյուղերից սկսեցին հեռանալ իրենց եղած-չեղածով, կենդանիներով ու սայլերով հազարավոր հայեր և այլ քրիստոնյաներ: Բոլոր այդ փախստականները ձգտում էին դեպի ք. Խոյ տանող միակ ճանապարհը, ամեն թույլ ավելացնելով քառսր, անկարգությունը և շփոթը, որով մարտերով նահանջող զորքի վրա հապշտապ նահանջի տհաճ պատկեր էր ստեղծվում՝ որոշ հատվածներում էլ նրան ներգրավելով անկանոն նահանջի մեջ:

65 Հանձին ռուսների ու բրիտանացիների նրանք տեսնում էին զավթիչների, որոնք Պարսկաստանը բաժանել են միմյանց միջև:

66 Ռուս ռազմական պատմաբան և գեներալ Ն. Կորսունի գնահատմամբ Հալիլի հավաքական կորպուսը կազմված էր լավ մարտական պատարաստականություն ունեցող զինծառայողներից և իրենից լուրջ վտանգ էր ներկայացնում, տե՛ս **Корсун Н. Г.**, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте, էջ 35:

67 Թ. Նազարբեկյանի ուժերը համալրումից հետո կազմել են 8 ½ գումարտակ, 12 հարյուրյակ և 12 թնդանոթ, տե՛ս **Масловский. Е. В.**, սշվ. աշխ., էջ 156:

68 Թուրք.՝ գումարտակ:

Իմ և շտաբի համար [տեղակայման] վայր ընտրվեց Մուխանջիկ գյուղից հյուսիս գտնվող ջրաղացի մոտ, որտեղ իմ հրամանով կազմակերպվեց նաև սպայական դիտակետ, որից պարզորոշ երևում էր առջևում ընկած տեղանքը, և հակառակորդի ոչ մի շարժում չէր կարող աննկատ մնալ մեր դիտարկումից: Այնտեղ ես տեղափոխվեցի լուսաբացին, երբ համաձայն գորասաղավորման գորքերը գբաղեցրել էին իրենց տեղամասերը: Երբ ես ջրաղացի մոտ էի և լրացուցիչ կարգադրություններ էի անում, ինչ որ կերպ կողքս հայտնվեց Բեդարխան Զադե Աբդուլ Ռիզակը: Նա մի ինչ որ հատուկ կասկածելի ուշադրությամբ ու հետաքրքրությամբ խորամուխ էր լինում իմ կարգադրությունների մեջ, ու, բացի այդ, ինձ նեղություն էր տալիս իր ներկայությամբ: Ես խնդրեցի նրան թողնել դիրքերը: Նա ինձ ասաց, որ իրեն հետաքրքրում է մարտի ընթացքը, իսկ գլխավորը՝ նրա արդյունքը: Դրան ես պատասխանեցի, որ թող գնա թիկունք ու այնտեղ սպասի մարտի արդյունքներին: Ես հստակ տեսնում էի, որ իմ խոսքերից հետո նա դժկամությամբ կատարեց իմ կարգադրությունը:

Ապրիլի 17-ի ողջ ընթացքում ընթանում էր միայն հրետանային ու հրացանային հրաձգություն: Հավանաբար հակառակորդը շոշափում էր մեր դասավորությունը: Ես վճռականորեն որոշել էի կամ հաղթել կամ զոհվել ու ողջ ուժերով աշխատում էի նույնը ներարկել նաև իմ գորքերին: Ես գիտեի, թե ինչ վտանգի է ենթարկված Ադրբեջանական ջոկատը: Հալիլ բեյը բաց էր թողել իր պատեհ առիթը: Եթե նա շարունակեր իր հարձակումը, երբ նա այդպես անսպասելի հայտնվեց [ապրիլի] 16-ին մեր ջոկատի առջև, ապա աղետն անխուսափելի կլիներ, քանի որ [ապրիլի] 16-ին Դիլմանի մեր ջախջախված ջոկատը նահանջում էր անկանոն, չունենալով պահեստագոր, կարևորը՝ առանց հրամանատարի, որը հրապուրվելով դեկավարեց շրջանցիկ գորայունը՝ գլխավոր ուժերը թողնելով բախտի քմահաճույքին:

[Ապրիլի] 17-ի լույս 18-ի գիշերը բոլորս պատկեցինք քնելու ջրաղացում: Ես, իհարկե, գիտենալով, թե ինչպիսի պատասխանատվություն եմ կրում, չկարողացա աչք փակել, չնայած, որ նախօրյակին ես չէի քնել: Ինձ հետ արթուն էր նաև Գլխավոր շտաբի կապիտան Ջինկեիչը, որն ինձ օգնում էր ընդունել հեռագրերն ու հեռախոսագրերը և նրանց պատասխանել:

[Ապրիլի] 18-ին, առավոտյան մոտ ժամը 4-ին ես դուրս եկա ջրաղացից ու լսեցի առաջին կրակոցը: Թուրքերն անցել էին հարձակման: Հրամայեցի բոլոր շտաբականներին արթնացնել: Նախօրյակին հրամայել էի հեռու տարածության վրա կրակ չբացել ու խնայել փամփուշտները:

Մենք դիտում էինք հակառակորդի հարձակումը հիանալով նրա կուռ շարժումներով, որը բառիս բուն իմաստով կատարյալ էր: Նա գործուն գրոհ սկսեց մեր դիրքերի վրա գրոհելով գլխավորապես կենտրոնը՝ Մուխանջիկը և մեր աջ թևը: Շուտով մարտը սկսվելուց հետո խնդրանքներ ստացվեցին օգնական ուժ և փամփուշտներ ուղարկելու մասին: Անձամբ ես փամփուշտ էի ուղարկում որքան որ հնարավոր էր: Դրանք փոխադրում էր, չվախենալով ուժեղ կրակից, 6-րդ գնդի զինագործ, տարիքավոր ժիլինը՝ միաժամանակ նա իր անվեհերությամբ աշխատում էր քաջալերել զինվորներին:

Նկատելով, որ [հակառակորդը] ցանկանում է շրջանցել մեր աջ թևը, ես երկարացրեցի ձակատը պահեստագորից ուղարկելով 6-րդ գնդի գումարտակը, որը դիրքավորվեց պատրաստի խրամատներում: Որոշ գորամասեր (6-րդ գնդի կենտրոնը) դժվարությամբ էին դիմանում թուրքերի ճնշմանը ու նույնիսկ մտադիր էին նահանջել, սակայն իմ վճռական սպառնալիքը, որ դուրս կբերեմ գնդացիները և անձամբ կոչնչացնեմ նահանջող վաշտերը՝ ազդեցին: Սկզբում թուլություն ցուցաբերեցին մարդիկ, որոնց համալրվել էին ռազմահանգրվանային գումարտակներից, սակայն [տեսնելով] իմ վճռականությունը՝ անկախ ամեն ինչից հաղթելու ենք թշնամուն՝ [այն] անցավ նաև գորքին:

Բացի դիտորդից, որը ինձ իրագեկ էր դարձնում գործերի մասին, կար նաև

կապիտան Ջինկևիչ, որը չնայած հակառակորդի մահացու կրակին շրջում էր մարտագիծը, ինձ ամեն ինչի մասին գեկուցում: Կեսօրից հետո ժամը 2-ի կամ 3-ի մոտերքը սրարշավ եկավ Պոլտավյան գնդի կազակ սարսափելի ջղային վիճակում և գնդի հրամանատար, գնդապետ Նալգիևին գեկուցեց, որ երեք հարյուրյակ ու հետախույզների ստորաբաժանումը ոչնչացվել են: Այդ գործամասերը պաշտպանում էին իմ աջ թևը Այան գյուղի մոտ՝ Մուխանջիկից մոտ 8 վերստ արևելք: Այդ մասին լսելով ես անմիջապես հեռախոսով խորքային պահեստագործի կարգադրեցի վարգով ուղարկել Մունժենյան կազ. գունդը դեպքի վայրը: Սակայն մինչև Մունժենյան գնդի ժամանումը թևանցումը վերացվել էր այն զորամասերի կողմից, որոնք գտնվում էին Այան գյուղում՝ հակառակորդի համար մեծ կորուստներով: Ճիշտ է և մեզ մոտ՝ Պոլտավյան գնդում և հետախուզական ստորաբաժանումում կորուստները զգալի էին:

Հակառակորդը մեր աջ թևում անհաջողության մատնվելով իր շրջանցիկ գորսայունով այնժամ ավելի ուժեղ գորսայուն ուղարկեց մեր ձախ թևի վրա: Երբ այդ ամենի մասին ինձ տեղեկացրեց դիտորդը և դա հաստատվեց հաղորդմամբ, ես հրամայեցի 5-րդ գնդի հրամանատարին, որը գտնվում էր խորը պահեստագործում, գետակի հունով առաջանալ մեր ձախ թևը՝ կանխելու այդ շրջանցումը, սպա առաջանալով աշխատել անցնել հակառակորդի թիկունքը: Այդ հանձնարարությունն այնպես հաջող կատարվեց, որ հակառակորդը երկյուղելով իր թիկունքի համար, կեսօրից հետո ժամը 5-ին սկսեց իր աջ թևի առաջավոր կետերից նահանջել: Անդրանիկը ինձ գեկուցեց հակառակորդի նահանջի մասին և խնդրեց թույլատրել անցնել հարձակման: Այդ ժամանակ ես գեկուցագիր ստացա 5-րդ գնդի հրամանատար, գնդապետ Դոկուչանից, որ շրջանցման վեացումից հետո նա անցել է հարձակման, ինչպես նաև կենտրոնական տեղամասի պետ, փոխգնդապետ Ծերեթելիից, որ իր տեղամասից հակառակորդը հապշտապ նահանջում է: Ստուգելու համար ես կապիտան Ջինկևիչին ուղարկեցի կենտրոնական տեղամաս, որտեղ նա վիրավորվեց և գործերի էությունը ստուգելուց հետո պարզվեց, որ հակառակորդը չի նահանջում, հակառակը՝ գործուն գրոհներ է մղում ու մոտենում, կարծես թե նախապատրաստվում է գիշերային գրոհի: Անդրանիկն իր տաքարյունության պատճառով, չսպասելով իմ կարգադրությանը, ինքնուրույն անցնում է հարձակման առջևում գտնվող գյուղը գրավելու համար: Նա չնայած, որ այն գրավեց, սակայն մեծ կորուստներ կրեց: Երբ պատգարակի վրա բերեցին կապիտան Ջինկևիչին (նա վիրավորվել էր աջ ոտքի կոճից) ես հարցրեցի իրավիճակի մասին, նա գեկուցեց, որ չի երևում, որ թուրքերը նահանջում են, կռիվը թեժ է: Մթության իջնելով փոխհրաձգությունը լռեց: Ջոկատի զինձառայողները խիստ ուժասպառ էին եղել, քանի որ նրանցից ոմանք մի քանի օր մարտ էին վարում:

Մութ գիշեր սկսեց: Իմ կողմից հրամաններ տրվեցին գիշերը հակառակորդի գործը ետ մղելու համար, քանի որ մեր զորամասերը սակավ փորձառու էին գիշերային մարտերում: Առաջ ուղարկված հետախույզները չկարողացան ստույգ տեղեկություններ հայտնել հակառակորդի մասին: Գիշերը թուրքերի կողմից հազվադեպ կրակում էին: Լուսաբացին ես գեկուցում ստացա, որ գիշերը հակառակորդը նահանջել է թողնելով իր սպանվածներին և որոշ վիրավորների, հրետ. արկեր ու մի շարք զինվորական բեռներ:

Ապրիլի 18-ի ողջ օրը գերազանց մարզված ու համարձակ հակառակորդը, մի ամբողջ օր գործուն գրոհներ էր կատարում և զորամասերի պետերը երբեմն նյարդայնություն էին ցուցաբերում, ուշադրություն չդարձնելով մարտերի տատանվող ու լարված իրավիճակին, հակառակորդի մտահաղացումների անորոշ լինելուն, որը գրոհում էր մեկ կենտրոնը, մեկ մի թևը, մեկ մյուսը, անկախ նրանից, որ իմ և շտաբի տեղակայման վայրում աջից ու ձախից թափվում էին գնդակներ ու ընկնում արկեր, իմիջիայլոց մոտակայքում գտնվող մարդիկ ու ձիերը սպանվել ու վիրավորվել էին, շտաբի բոլոր անդամները պահպանում էին լիակատար հանգստություն ու սառնա-

արտություն, ճիշտ էին գնահատում իրավիճակը և ժամանակին ձեռնարկում անհրաժեշտ միջոցառումները: Ես ողջ ուժերով աշխատում էի ամրապնդել ու ոգևորել զորամասերի պետերին և դա հանգեցրեց նրան, որ չնայած հակառակորդը ուժով երկու անգամ գերազանցում էր և որակով մեզ չէր զիջում, սակայն, հավանաբար, ցնցված անհաջող գրոհներով, ոմանք ջախջախվեցին մեր զորքերի տոկոսության շնորհիվ ու ահռելի կորուստներով հեռացավ, ակնհայտորեն զգալով, որ այլևս ի գորու չէ պայքարել մեր հետ:

Հակառակորդի նահանջից հետո ես կարգադրեցի հետապնդել հակառակորդին: Առաջապահը, որը կազմված էր 5-րդ հրաձգ. գնդի 3-ական գումարտակներից, 4 լեռն. թնդ. և Սունժենյան կազ. գնդից, հասան հակառակորդի վերջապահին ու նրա հետ մարտի մեջ մտան: Թուրքերի գլխավոր ուժերը հասցրեցին նահանջել հարավ՝ դեպի Թուրքա-Աղվան-Կուդի լեռները: Մթին այնտեղ նահանջեց նաև վերջապահը:

[Ապրիլի] 19-ին մնացած ջոկատով ես անցա քաղ. Դիլման: Ես շտաբի հետ տեղավորվեցի Դիլմանի հյուսիսային արվարձանում գտնվող մեր զորամասերի նախկին զորանոցներում, իսկ ջոկատը գիշերակացի մնաց քաղ. Դիլմանի արվարձաններից այն կողմ: Բերեցին չոր խոտ և բոլորը պառկեցին: 2-օրյա հոգնեցուցիչ ու անքուն գիշերներից հետո բոլորը քնեցին: Չէինք քնել ես ու կապի համար [Ատրպատականյան] ջոկատից գործուղված սպան՝ Ներգատովը, որն ավարտել էր արևելյան լեզուների դասընթացը⁶⁹: Նա շատ լավ սպա էր, զարգացած ու բանիմաց: Վերջին երեք օրերում անձնական ապրումներ ունենալով ես չէի կարողանում քնել: Գիշերը տարբեր անձանցից ստացվեցին հեռագրեր՝ գեներալ Չեռնոզուբովն իր հեռագրում շնորհակալություն էր հայտնում ինձ ու զորքին փայլուն գործի համար, տեղեկացրեց, որ չկա մի վիրավոր, որ չհիշատակեր իմ ազգանունը որպես իրենց ու ջոկատի փրկիչ և որ նա դիմելու է հեռագրով դեկավարությանը՝ ինձ Գեորգիևյան խաչով⁷⁰ պարգևատրելու համար:

Երկրորդը ստացվեց զորքերի Գլխավոր հրամանատար, գեներալ-համհարզ Վորոնցով-Դաշկովից, որում նա նույնպես շնորհակալություն էր հայտնում ինձ ու զորքին հաղթանակի համար և հաղորդում էր, որ այդ փառահեղ գործի համար նա անձամբ կզեկուցի Տեր Կայսրին: Հաղթանակի առթիվ հեռագիր ստացվեց նաև գեներալ-լեյտենանտ Վոյսկուց, իսկ գեներալներ Յուդենիչը և կորպուսի հրամանատարը չգիտես թե ինչու ինձ չարժանացրին շնորհավորանքի: Հետո ստացվեց երկրորդ հեռագիրը գեներ. Չեռնոզուբովից, որում նա նշում էր, որ իրեն լուրեր են հասել, որ ես ուժեղ կրակի տակ գտնվել եմ մարտի դաշտում, որ ես պետք է հիշեմ, որ ես ինձ չեմ պատկանում, ուստի պետք է պահպանեմ ինձ: Գեներ. Չեռնոզուբովը, որպես տեսաբան, վատ գիտեր մեր զինվորի և հատկապես ռազմահանգրվանային գումարտակներից համարվածների հոգեբանությունը, միայն այդ կերպ կարելի էր նրանց ստիպել անդդվելի լինել: Մինչ այդ հեռագրերը ստանալը, ես չէի մտածում, որ ես ինչ ոչ հերոսություն եմ կատարել, մտածում էի, որ լոկ իմ պարտքն եմ կատարել:

Ապրիլի 20-ին, ուժեղ շոգի հետևանքով, սպանվածների մարմինները սկսեցին ուժեղ թափով քայքայվել: Ես նշանակեցի հանձնաժողով սպանվածներին հաշվելու և կարգադրեցի մեր վիրակապման ջոկատին տեղացի պարսիկ բնակիչների հետ նրանց թաղել: Հաշվեցին հակառակորդի մոտ 2000 մարդու, իսկ յուրայիններից՝

69 Արևելյան լեզուների դասընթացը հիմնվել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության Արևելյան լեզուների դպրոցին կից: Ունկդիրներին դասավանդում էին պարսկերեն, արաբերեն թուրքերեն և թաթարերեն, միջազգային ու մահմեդական իրավունք: Ուսման տևողությունը 3 տարի էր: Հետագայում դասընթացներն անցան Գլխավոր շտաբի ակադեմիայի տնօրինության ներքո և ավելացվեց չինարենը: Շրջանավարտը պարտավոր էր Ասիայում ծառայել առնվազն 4,5 տարի:

70 Սուրբ Գեորգիի շքանշանը (1769-1920) հանդիսացել է Ռուսական կայսրության բարձրագույն զինվորական պարգևը, որով պարգևատրվել են բացառապես սպաները: Ունեցել է 4 աստիճան՝ 1-ին. 2-րդ, 3-րդ և 4-րդ: Համաշխարհային պատերազմի ընթացքում ոչ մեկը չի պարգևատրվել 1-ին աստիճանի շքանշանով, իսկ 2-րդ աստիճանով՝ ընդամենը 4 հոգի, որոնցից մեկն էր Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ն. Ն. Յուդենիչը՝ Էրզրումի գրավման համար:

մոտ 600 մարմիններ, մերոնցից վիրավորվել էին 800 հոգի⁷¹: Մերոնց թաղեցին իմ ու ղեկավար անձնաց ներկայությամբ Դիլման քաղ. հյուսիսային մասում: Հուղարկավորության արարողությունը կատարեց 6-րդ գնդի քահանան:

Սպանված թուրքերի մարմինները խուզարկվում էին նաև դրուժինիկների կողմից, որոնք առավել փորձառու էին այդ հարցում: Հաջողվեց երկու սպանված սպաների մոտ գտնել երկու կարևոր տեղեկություններ: Նրանցից [նամակից] մեկում սպան գրում էր Կ. Պոլիս կնոջը, որ մարտից հետո փող կուղարկի, հույս ունի, որ առանձնապես ուժեղ կռիվ չի լինի, քանի որ տեղեկություն ունեն իրենց գործակալ Աբդուլ Ռիզակից, որ հակառակորդն ունի միայն հետևակի մեկ գումարտակ և մեկ կազ. գունդ: Իրականում այդպես էր, երբ [թուրքերը] գրավեցին Դիլմանը:

Մեկ այլ սպայի մոտ կար օրագիր, որտեղ հիշատակվում էր հենց նույնը և գրված էր Աբդուլ Ռիզակի ազգանունը: Այդ փաստաթղթերն ուղարկվեցին գեներ. Չեռնոզուբովին, նա, սակայն, այդ փաստաթղթերի նկատմամբ վստահություն չցուցաբերեց: Զարմանալի է այն հանգամանքը, որ մարտն ավարտվելուց հետո Աբդուլ Ռիզակն այլևս չերևաց ինձ մոտ, այլ մեկնեց Խոյ⁷²: Ականատեսներն ինձ պատմեցին, որ նա մարտի ողջ ընթացքում աստիկ հուզված էր: Դա պարզվեց գերիների հարցաքննությունից: Հալիլ բեյի առաջադրանքը կայանում էր հետևյալում՝ հետախուզությունից լավ տեղյակ լինելով, որ մենք Ադրբեջանում չունենք կենտրոնացված զգալի ուժեր, նա հավաքական [բանակային] կորպուսով պետք է ջախջախեր մեր ջոկատը և համարվելով պարսկական քրդերով ու կամավորներով շարժվեր Ջուլֆայի վրա, ոտքի հաներ արդեն ապստամբության նախապատրաստված մահմեդական բնակչությանը, որից հետո թափանցեր Ղարաբաղով ու Զանգեզուրով Ելիսավետպոլյան⁷³ ու Բաքվի նահանգ., քանդեր երկաթուղին ու եթե հաջողվեր՝ ոտքի հաներ Դաղստանը: Զարմանալի է, որ հակառակորդի հայտնվելուց մի քանի օր առաջ գնդապետ Նալգինն իրականացնել էր ուժեղացված հետախուզություն դեպի Թուրքիա և Պարսկաստան, սակայն ոչինչ չէր նկատել, իսկ հակառակորդի ջոկատը փոքրաթիվ չէր: Հավանաբար հետախուզությունը կատարվել էր ծայրահեղ անփույթ: Բացի այդ, դա կարող է օրինակ լինել, թե մեզ մոտ՝ Ադրբեջանական ջոկատում, ինչպես նաև բանակի շտաբում, որքան թույլ էր կազմակերպված հետախուզությունը: 25-ի որ մեկ ամսից ավելի պետք էր, որպեսզի 3-րդ դիվիզիան կարողանար Կոստանդնուպոլսից հասնել մինչև Պարսկաստան:

[Ապրիլի] 20-ին իմ ջոկատի առաջապահը տեղակայվեց Դիլմանից հարավ, պահակային պահպանությունը դրվեց Պատավար, Ուլյա, Շեյթան-Կարա-Քիլիս գյուղերի գծի վրա, ուղարկելով ուժեղացված հեծյալ պարեկներ մինչև հակառակորդի հետ շփվելը:

[Ապրիլի] 22-ին ես գլխավոր ուժերի հետ անցա Մուխանջիկ, իսկ 5-րդ գնդի 2 գումարտակ թողնելով առաջավոր ջոկատում 1 գումարտակ և Սունժեյան կազ. գունդը: Նույն օրը Խոյից գյուղ Սեմերիկ եկավ Պլաստունյան⁷⁴ 3-րդ հերթի բրիգադը (20-րդ, 21-րդ, 22-րդ և 23-րդ գումարտ.) գեներալ Մուդրիի հրամանատարությամբ, որն իմ Մուխանջիկ հասնելուց հետո ներկայացավ ինձ, որից հետո ես գնացի բրիգադ ու ծանոթացա գումարտակների հետ:

Հայկական դրուժինան տեղակայվեց Մուխանջիկից հյուսիս-արևմուտք՝ Վարվան գյուղում: Ես շտաբի հետ բնակվեցի մի պարսիկի պատկանող երկհարկանի տանը: Մեծ սենյակում հաստատվեցին շտաբի աստիճանավորները և շտաբի պետը: [Ապ-

71 Կամավորներից զոհվեց 21 և վիրավորվեց 55 հոգի:

72 Ճակատամարտից հետո Աբդուրբեգակը ձերբակալվեց և ուղարկվեց Թիֆլիս, որտեղ ինչ-ինչ պատճառներով նրա դավաճանությունը չհաջողվեց հաստատել, չնայած առկա փաստերին: Ավելին, նրան հանձնարարվեց Բոհտանում (Վանա լճից հարավ) քրդական ապստամբություն բարձրացնել և ապստամբ քրդերի հետ գրավել Բիթլիսը, որը այդպես էլ չիրականացավ, տես **Սահակյան Ռ.**, Ռուսական բանակի հայկական և քրդական ջոկատները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ԲՀԱ, 2010, N 1, էջ 30-31:

73 Գանձակի:

74 Պլաստուն՝ բառացի նշանակում է՝ «տղացող»: Հետևակ կազակային ստորաբաժանում, որոնց հանձնարարվում էր պահակային և հետախուզական ծառայություն:

րիլի] 24-ին Մուխանջիկ եկավ գեներ. Չեռնոգուբովը: Նա մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնեց ինձ և իմ շտաբին փայլուն մարտի համար: Հարցրեց ինձ, թե ո՞վ է կազմել գեկուցագիրը⁷⁵, ես մատնանշեցի իմ շտաբի պետ, գնդապետ Պոլտավ-ցևին: Նա [Չեռնոգուբովը] ասաց, որ շատ համեստ է կազմված: Դրանից հետո նա խնդրեց անցնել փոքրիկ սենյակը և ինձ հայտնեց, որ իմ շտաբում կա թուրքական լրտես: Ես իհարկե գարնացա ու հարցրեցի, թե ո՞վ կարող է լինել: Նա ինձ [ասաց], որ [լրտեսը] իմ շտաբի պետ, գնդապետ Պոլտավցևն է: Ես խիստ վրդովվեցի, ասացի նրան, որ այդ մասին ոչ միայն խոսել, այլև մտածել չեմ կարող ու շրջվեցի ցանկանալով դուրս գալ: Նա կանգնեցրեց ինձ և ասաց, որ ինքն էլ չի հավատում, թե ինչ հիմքեր ունեւր նա, ես այդպես էլ չկարողացա իմանալ: Եվ մենք միասին դուրս եկանք: Այդ մասին, ես, իհարկե, ոչ մեկին չպատմեցի: Գնդապետ Պոլտավցևին իր անհաշտ բնավորության համար ինչպես Չեռնոգուբովը, այնպես էլ նրա շտաբի անդամները չէին սիրում: Չկար որևէ հավաստի պատճառ նրան դրանում կասկածելու, ինչպես նաև [պնդելու], թե նա կարող էր լինել լրտես:

Մտնելով մեծ սենյակ գեներ. Չեռնոգուբովին ինձ ասաց, որ գեներ. Օգանովսկին պահանջում է հարձակվել, հակառակորդին վերջնականապես ջախջախելու համար, և որ ինձ կմոտենան Կովկ. 7-րդ հրաձգ. գնդի ևս 2 գումարտակ: Այդ ժամանակ ջոկատ, նվերներով, եկավ հայկական կազմակերպությունը, որը գլխավորում էր «Մշակ» թերթի խմբագիր Առաքելյանը⁷⁶: Նա մեզ նվերներ բաժանեց: Ես նրան ասացի, թե որտեղ է բանակել Անդրանիկի դրուժինան, մտածելով, որ նա անպայման կայցելի դրուժինա ու կբաժանի նվերներ, սակայն, հետագայում իմացա, որ նա չցանկացավ հանդիպել Անդրանիկի հետ, ուստի չգնաց դրուժինա:

Չեռնոգուբովի մեկնելուց հետո, ենթադրելով, որ հետագա հարձակումն ինձ են հանձնարարելու, ես որոշեցի ուսումնասիրել հակառակորդի կողմից գրավված դիրքերը: Այդ առաջադրանքը հանձնարարեցի Պոլտավյան կազմ. գնդի հրամանատար, գնդապետ Նալգինին: Կարգադրեցի հիմնականում հետագոտել գրավված դիրքերի ձախ թևի մատուցները, որտեղից ենթադրում էինք հակառակորդին հասցնել գլխավոր հարվածը, քանի որ ձակատային գրոհն առանց շրջանցման անմաստ էր: Հետախուզությունից հետո հակառակորդը ենթադրելով, որ ես ցանկանում եմ կտրել նրա նահանջի ուղին, գիշերը հեռացավ՝ հրապատվար թողնելով զինված քրդերից: Ցավոք, պահակային պահպանությունը և հեծելապարեկները դա չնկատեցին, քանի որ հակառակորդը վարպետորեն էր քողարկել իր նահանջը: Դա պարզվեց հետևյալ հանգամանքներում:

Ապրիլի 26-ին ժամանեց արքայազն Օլդենբուրգսկին⁷⁷, ռուսաստանյան բանակի սանիտարական մասի պետի օգնական գեներալ Բերնովը⁷⁸, նրանց հետ միասին՝ փոխարքայի մոտ ծառայության մեջ գտնվող գեներալ Թամամշևը⁷⁹: Նրանք ցանկացան Մուխանջիկի և Դիլմանի մոտ տեղակայված զորքերի սանիտարական վիճակի ստուգումից հետո գնալ առաջագիծ՝ այնտեղ գտնվող զորքերի սանիտարական վիճակի հետ ծանոթանալու համար: Առաջագծում մեր զորամասերը հազվադեպ հրաձգություն էին վարում հակառակորդի հետ: Ինձ մոտ տպավորություն ստեղծվեց,

75 Նկատի ունի հրամանատարությանը ներկայացված այն գեկուցագիրը, որտեղ Սալմաստի ջոկատի հրամանատար, Գլխավոր շտաբի գնդապետ Վ. Ն. Պոլտավցևը արժևորել է Դիլմանի ճակատամարտում Թ. Նազարբեկյանի ունեցած դերը: Գնդապետի գեկուցագիրը տես **Саакян Рубен**, Роль генерала Т. Назарбекияна в битве под Дильманом 1915 года (По архивным материалам), ՊԲՀ, 2016, N 2, էջ 201-215:

76 **Առաքելյան Համբարձում** (1855-1918), լրագրող, հասարակական-քաղաքական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր-հրատարակիչ, Հայ ժողովրդական կուսակցության հիմնադիրներից:

77 **Օլդենբուրգսկի Ալեքսանդր Պյոտրի** (1844-1932), ռուս ռազմական գործիչ, հեծելազորի գեներալ, սանիտարական և տարհանման զորամասի գերագույն պետ (1914-1917), կազմակերպել է սանիտարական աշխատանքները գործող բանակում:

78 **Բերնով Եվգենի Իվանի** (1859-1932), ռուս ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ: Սանիտարական և տարհանման զորամասի գերագույն պետի օգնական:

79 **Թամամշևյան Բարսեղ Միքայելի** (Թամամշև Վափիլի Միխայիլի, 1859-1932), ռուսական բանակի գեներալ-մայոր, Կովկասի փոխարքային կից Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատում փախստականների տեղավորման վարչության Գլխավոր լիազոր (1914-1917):

որ թե մեր կողմից, ինչպես նաև հակառակորդի կողմից ինչ որ ծուլություն կար: Այդ իսկ պատճառով ես որոշեցի հաջորդ օրը առաջապահ ջոկատով, որին կտրվի պլաստունների 1 գումարտակ, 8-րդ հրաձգ. գնդի 2 վաշտ, իրականացնել ուժեղացված հետախուզություն: Այդ առաջադրանքը հանձնարարեցի 5-րդ հրաձգ. գնդի հրամանատար, գնդապետ Դոկուչանկին: Ցավոք, այդ հետախուզությունը տվեց այն ցավալի արդյունքները, որոնց մասին ես ասել եմ վերը: Առաջապահին հրամայված էր անցնել հարձակման, որին հաջողվեց հասնել հակառակորդին, սակայն մի քանի ժամ հետապնդումից ու փոխհրաձգությունից հետո 5-րդ գնդի հրամանատարն իր սխալի պատճառով իր գործնասերը վերադարձրեց, իսկ ինքը զեկույցով եկավ Մուխանջիկ: Ճիշտ ու ճիշտ, հենց այդ նույն ժամանակ Մուխանջիկ եկավ գեներ. Չեռնոգուբովը: Մենք երկուսս էլ ապշել էինք նրա զեկույցից: Չեռնոգուբովը նրան սաստիկ հանդիմանեց նման սխալի համար ու հրամայեց անհապաղ առաջանալ ու հասնել հակառակորդին: Ես նույնպես հանդիմանեցի, զարմանք հայտնելով, թե ինչպես կարող է գնդի հրամանատարը չիմանա զինվորական գործի պարզ այբու-բենը, որ չի կարելի կորցնել կապը հակառակորդի հետ: Սակայն, ցավոք, չափազանց շատ ժամանակ էր անցել ու նրա հետագա գործողությունները ոչ մի դրական արդյունք չունեցան:

Շուտով գեներ. Չեռնոգուբովն իր շտաբի հետ Խոյից տեղափոխվեց Մուխանջիկ ու տեղավորվեց վարչատանը:

Ապրիլի 30-ին Հայկական դրուժինան և Սունժենյան կազ. գունդը Սունժենյան գնդի հրամանատար, գնդապետ Զեմցովի⁸⁰ հրամանատարությամբ ուղարկվեցին Խանասորի լեռնանցքը: Նրանք մարտով գրավեցին լեռնանցքը: Բռնվեցին մի քանի գերիներ: Իմ հարձակման ժամանակ իմ ջոկատում գտնվելու թույլտվություն խնդրեց ինչ որ կարևոր թերթի ամերիկյան թղթակից⁸¹: Գեներ. Չեռնոգուբովը տվեց իր թույլտվությունը:

Մայիսի 1-ին իմ առաջացման հետ միաժամանակ գեներ. Չեռնոգուբովը Կուշչինյան լեռնանցք ուղարկեց 5-րդ հրաձգ. գունդը, մեկ լեռնային մարտկոց և Պոլտավյան կազ. գունդը: Լեռնանցքը գրավվեց առանց մի կրակոցի: Դրանից հետո 5-ին գնդին հրամայվեց գրավել Ուրմիա լճից դեպի Կուշչի և մինչև Թուրջան լեռը պահակային գիծը, իսկ մնացած զորամասերը մնացին Մուխանջիկում որպես պահեստազոր:

Մայիսի 2-ին իմ ջոկատին միացնելով Հայկական դրուժինան ու Սունժենյան կազ. գունդը, ես Խանասորից ուղղվեցի Դերիկ ու սպասում էի սունժենցիների զեկույցին՝ արդյոք Դերիկը գրավված է, թե ոչ: Աննպատակ, բավական երկար ժամանակ մնալով կիրճում, ես կանչեցի Անդրանիկին ինձ մոտ և խնդրեցի առաջ ուղարկել իր հեծելազորը, պարզելու համար, թե արդյո՞ք Դերիկը գրավված է հակառակորդի կողմից: Հեծյալ հայերն արագ սլացան Դերիկի ուղղությամբ և որոշ ժամանակ անց նրանցից հաղորդում ստացա, որ Դերիկում հակառակորդ չկա: Դրանից հետո ես ջոկատով այնտեղ շարժվեցի: Դերիկ գալով ես հանգիստ տվեցի ջոկատին, իսկ ինքս գնացի դիտելու հնագույն վանքը⁸²: Վանքում մնացել էին միայն պատերն ու տանիքները: Այն ինչը, որ քիչ թե շատ արժեքավոր է եղել կողոպտել էին թուրքերն ու քրդերը: Այս վանքի մասին բացատրություններ էր տալիս Աշուրբեկ [Աշխարհբեկ] Քալանթարյանը: Բացի ինձանից, վանքով հետաքրքրվեցին նաև դրուժինիկները, որոնք նույնպես եկան այն դիտելու: Ես հետաքրքրվեցի, թե որտեղ է Բարդուղիմեոս Առաքյալի⁸³ դամբարանը: Ինձ այն ցույց տվեց Քալանթարյանը: Վանքին կից հար-

80 **Զեմցով Սերգեյ Իվանի** (1872–1928), գնդապետ, Սունժենյան-Վաղիկավկայան 1-ին գնդի հրամանատար:

81 Դա «Ասոցիեյթեդ Պրեսս» (Associated Press) միջազգային նորությունների և լրատվական ընկերության թղթակից Դ. Բ. Մաքգոանս (D. B. Macgowan) էր, տես **Ussher C. D., Knapp G. H.**, An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War. N. Y., Boston, 1917, էջ 293:

82 Այստեղ Նազարբեկյանը Սբ. Բարդուղիմեոսի վանքը շփոթել է Դերիկի Ս. Աստվածածին վանքի հետ, քանի որ Խանասորից նա չէր կարող հետ դառնալ Պարսկաստանի տարածք:

83 Վանքը, որը գտնվում է Աղբակ գավառում և կրում էր Սբ. Բարդուղիմեոս անվանումը, հիշատակվում է 13-րդ դարից: Կառուցվել է Քրիստոսի աշակերտ և քարոզիչ Սբ. Բարդուղիմեոս առաքյալի գերեզմանի

մարեցվել էր հատուկ լրացուցիչ կառույց, որտեղ և հանգրվանել էր Առաքյալի մարմինը: Դամբարանը կիսով չափ բացված էր: Ես հարցրեցի, թե ինչու քրդերն այն ամբողջությամբ չէին բացել: Ներկա գտնվող դրուժինիկներից մեկը ինձ բացատրեց, որ ինքն էլ է հետաքրքրվել այդ հարցով ու հարցրել է այնտեղ մնացող մի քանի քրդերի: Նրանք իրեն պատմել են, որ այն քրդերը, որոնք բացել էին դամբարանը, շատ հոգնել ու ցանկացել էին ջուր խմել, դադարեցրել են աշխատանքը ու իջել վանքի ստորոտի մոտ հոսող գետակը (Ալբեկ-սու [Մեծ Զաբ]): Երբ նրանցից մեկը սկսել է խմել, անսպասելիորեն իրեն վատ է զգացել ու տեղուտեղը մահացել է, որից հետո մյուսները սարսափած փախել էին վանքից:

Ես իմ ջոկատի հետ գգուշորեն էի առաջանում, քանի որ ոչինչ չգիտեի հակառակորդի մասին: Ես իմ ջոկատը աննկատ գիշերակացի տեղավորեցի վանքից հարավ-արևելք, Ալբեկ-սու թափվող փոքրիկ գետակի կիրճերից մեկում: Ընտրեցի բանակատեղ և սկսեցի այն ամրացնել, սպասելով իրադրության պարզմանը, սունժենցիներից ու թամանցիներից ուժեղացված հեծելապարեկներ ուղարկելով հարավ՝ դեպի Չուխ Գյադուկ լեռնանցքի, ք. Բաշկալեի ու Ալբեկ-սու գետի ուղղություններով:

Մայիսի 4-ին ինձ մոտ եկավ համալրում՝ 20-րդ և 21-րդ պլաստունյան գումարտակները: Նրանց հանձնարարված էր զինված քրդերից ազատել Ալբեկ-սուի ձորը սկսած Կարաչիան գյուղից: Իմ այն հարցին, թե ինչպես է նրանց հաջողվել անցնել քրդական շրջաններով, արդյո՞ք շատ չէին անհանգստացնում քրդերը, գումարտակների հրամանատարներից մեկը, գնդապետ Նեմիրովիչ-Դանչենկոն ինձ պատասխանեց, որ սկզբնապես՝ այո՛, սակայն այն բանից հետո, երբ խիստ միջոցների դիմեցինք քրդերը դադարեցրին հարձակումները: Իմ այն հարցին, թե ինչ էին իրենցից ներկայացնում այդ կտորուկ միջոցները, նա ինձ ասաց, որ թեժացնում էին թոնիքը (տեղաբնիկների վառարանը՝ հաց թխելու համար) գերիներին ողջ-ողջ նետում էին այնտեղ, կենդանի թողնելով 2-ից 3 վկաների, որոնց հետո ազատ էին արձակում: Նման դաժանություններ էի էր հայերին, որոնք քրդերի դարավոր թշնամիներն էին և որոնք մեծ չարիքներ էին գործել նրանց նկատմամբ, սակայն նման դաժանություն ռուսների կողմից ինձ համար անհասկանալի էր: Դա ես հայտնեցի գնդապետ Նեմիրովիչ-Դանչենկոյին, սակայն նա ինձ չպատասխանեց:

Տեղեկանալով, որ հակառակորդը հայտնաբերվել է Չուխ Գյադուկ լեռնանցքում, ես այդ լեռնանցքն ուղարկեցի Հայկական դրուժինան ու կազակների հարյուրյակը: Ջոկատը լեռնանցքում հայտնաբերեց ժանդարմների գումարտակ ու զինված քրդեր: Եռօրյա մարտերից հետո դրուժինան ետ մղեց հակառակորդին լեռնանցքից, գրավեց բուն լեռնանցքը ու սկսեց ամրացնել դիրքերը: Անդրանիկը, ինչպես ավելի վաղ գրել էի, Դիլմանի մարտից հետո գնահատեց սակրավորական բահը և սկսեց այն օգտագործել: Ես էլ ճապոնական պատերազմից⁸⁴ սկսած սովորություն ունեի ամրացնել դիրքերը չանսալով թեկուզ թշնամու փոքրաթիվ լինելուն:

Թամանցիների դիվիզիոնը, որին ես ուղարկել էի ք. Բաշկալե, գրավեց այդ քաղաքը ու գերեց Հալիլ բեյի ջոկատից հետախուզության համար ուղարկված թուրքական հեծելապարեկին: Այդ հեծելապարեկից մենք վերջապես տեղեկացանք Հալիլ բեյի ջոկատի մասին: Հալիլ բեյը Դիլմանի անհաջող օպերացիայից հետո ցանկանում էր գնալ Վան, սակայն նրա մտադրության իրականացման համար արգելք հանդիսացավ իմ առաջացումը դեպի Բաշկալե:

Բացի հեծելապարեկից, Բաշկալեում գերվեց մի վիրավոր քուրդ ևս: Նա հայտնեց, որ Բաշկալեից 10 վերստ հարավ կանգնած են 4 թաբուրներ⁸⁵, իսկ Հալիլ բեյը

վրա: Համարվել է քրիստոնյա աշխարհի հնագույն սրբավայրերից մեկը: Վանքից մոտ 1 կմ հարավ թաղված են 1896 թ. կոտորածների ժամանակ Վան քաղաքից հեռացած և քրդերի կողմից կոտորված հայերի եղբայրական գերեզմանները, որոնք կոչվում են «սահառակների գերեզմաններ», տե՛ս Ա-Գո, իմ հիշողությունները: Առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Ռուբեն Գասպարյանի** և **Ռուբեն Սահակյանի**, Եր., 2015, էջ 307:

84 Նկատի ունի 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը: 85 Թուրք. գումարտակներ:

մնացած ջոկատների հետ գտնվում է Ռեյխսանտ գյուղից 20 վերստ հարավ՝ Չուխյան լեռնանցքում, [ուր] գտնվում են ժամդարմների փոքրաթիվ զորամասեր ու զինված քրդեր: Ինչպես ասված էր վերը, հակառակորդը լեռնանցքից դուրս մղվեց դրուժինայի կողմից: Համենայն դեպս, անձամբ իմ կողմից, Չուխյան ջոկատը համալրվեց Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 1 գումարտակով:

Մայիսի 7-ին հրամայեցի ջոկատին անցնել Բերլեշին կիրճը (Դերիկից հարավ-արևմուտք, 10 վերստ): Առաջապահում նշանակվեց 7-րդ հրձգ. գնդի հրամանատար, գնդապետ Օբրագցովը՝ 2 գումարտ., Կովկ. 7-րդ հրաձգ. գնդի 6 գնդացի, 4 լեռն. թնդանոթ, Սունժենցիների 2 հարյուրյակ և Թամանցիների 1 $\frac{3}{4}$ հարյուրյակ: Նրան [գնդապետ Օբրագցովին] հրամայված էր կանգ առնել Էլեյիյալ-Խարաբա գյուղերի միջև եղած տարածքում: Գլխավոր ուժերն էին՝ գնդապետ Տրեդենսկու 6-րդ հրաձգ. գունդը, 1 $\frac{3}{4}$ գումարտ., 8-րդ հրաձգ. գնդի 1 գումարտ., 4 գնդ., 20-րդ և 21-րդ պլաստունյան գումարտակները, 8 լեռն. թնդ., Սունժենցիների 1 վաշտ և Թամանցիների $\frac{3}{4}$ հարյուրյակ: Նրան [գնդապետ Տրեդենսկուն] հրամայված էր տեղակայվել Էլեսան գյուղից հյուսիս-արևելք գտնվող Բերլեշին կիրճում: Ձախ ջոկատը՝ Սունժենյան գնդի 1 հարյուրյակ, պետք է շարժվեր Ալբեկ-սու գետի հովտով դեպի հարավ, գլխավոր ուժերի հետ համընթաց, պաշտպանելով նրա առաջխաղացումը, հետախուզելով դեպի հարավ և արևելք տանող ուղղությունները ու կանգ առնել Բիտկան գյուղի մոտ (Դերիկից հարավ՝ Խարաբա գյուղի գծի վրա), Խանասորի ջոկատը (ետ էր քաշվել Չուխ Գյադուկի լեռնանցքից) կապիտան Պլատոնովի [հրամանատարությամբ]՝ Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի $\frac{3}{4}$ գումարտ., Սունժենցիների $\frac{1}{2}$ հարյուրյակ և կուբանցիների $\frac{1}{2}$ հարյուրյակ, գրավելով Խանասորի լեռնանցքը և 1 վաշտով ու $\frac{1}{2}$ հարյուրակի հետ Կարատչիան գյուղը, ապահովում են մեր հաղորդակցությունը թիկունքի՝ Խանասորի ու Դերիկի հետ, իրականացնում են հետախուզություն դեպի արևմուտք և դեպի Ալբիսի կողմը: Պորուչիկ Ակիմովի Դերիկի ջոկատը՝ Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի $\frac{1}{4}$ գումարտակ ու Թամանյան կազակ. գնդի $\frac{1}{4}$ հարյուրյակ, պետք է ապահովեր մեր թիկունքային ճանապարհը դեպի Խանասորի լեռնանցքը, հետախուզություն կատարելով դեպի արևմուտք, կապ պահպաներ ջոկատի և Կարաչիանի հետ:

Մեր կազակների կողմից ք. Բաշկալեն գրավելուց հետո ես իմ շտաբի պետի հետ մեկնեցի այնտեղ, նպատակ ունենալով ուսումնասիրել քաղաքը, Դերիկի ու Բաշկալեի միջև ընկած տեղանքն ու ճանապարհները: Դա անհրաժեշտ էր հնարավոր մարտի դեպքում դիրքերի տեղը որոշելու համար: Ինձ հետևեցին հայ բնակիչները, որոնք ստիպված էին լքել իրենց գյուղերը, իսկ ոմանք ընտանիքները՝ 1914 թ. դեկտեմբեր ամսի մեր նահանջի ժամանակ: Հայկական գյուղերը տառաջիորեն մեռած էին: Դժբախտ հայերն իրենց թողած ընտանիքներին գտան բոլորին մորթված ու նետված ջրհորները, կենդանիները, որոնք փակված էին եղել գոմերում առանց ջրի ու կերի սատկել էին: Հնարավոր չէր առանց սարսուռի տեսնել նրանց՝ վերադարձած մարդկանց տառապալից լացը, որոնք հույս ունեին ողջ գտնել յուրայիներին: Այդ սրտաճմլիկ տեսարաններն ինձ սարսափելի դառնացնում էին: Ինձ միայն զարմացնում էր այն, թե ինչպես նրանք [տղամարդիկ] կարող էին լքել ընտանիքները և փախչել, լավ իմանալով թուրքերի ու քրդերի բարքերը և նրանց արյունաբերու լինելը: Շտաբի պետին հրամայեցի, որպեսզի լուսանկարեն այդ սարսափելի գազանությունները:

Բաշկալեն գեղեցիկ քաղաք է: Գտնվում է մոտ 8000 ֆուր⁸⁶ [քարձրության վրա], մեծ լեռան լանջին կիսաշրջանով: Տները մեծ, սպիտակ էին, բավականին մաքուր: Շատ էին երկհարկանի տները: Ներկաներից ոմանք [քաղաքի] դիրքը համեմատում էին Նիցցայի հետ: Փողոցները լայն էին ու նեղ: Ջրանոցները շատ լավն էին: Բացարձակապես զուրկ էր բուսականությունից: Նախկինում այդ քաղաքը հանդիսացել է հայ արքաների անսառնոցը: Բնակիչներ բնավ չկային: Բնակիչների մեծ մասը

86 1 ֆուրը (ոսնաչափ) հավասար է 30,5 սմ:

հրեաներ էին, որոնք մեր մոտենալուց փախել էին, երկյուղելով, որ մենք վրեժխնդիր կլինենք, քանի որ երբ մենք գրավել էինք քաղաքը, մեր սխալի հետևանքով (մարտական պահպանության կողմից չէր գրավվել ամենաբարձր լեռը) նրանք 1914 թ. դեկտեմբերին տեղեկացրին թուրքերին մեր վրիպումի մասին և բացի այդ հրեաները վախենում էին հայերի վրեժխնդրությունից, որոնք սարսափելի չարացած էին նրանց նկատմամբ: Հայերն ամբողջ ժամանակ հրդեհում էին քաղաքը և ինձնից մեծ ջանքեր պահանջվեց այն պահպանելու համար:

Մայիսի 7-ին մեզ ուրախալի լուր հասավ, վանեցիների մեկամայա հերոսական պաշտպանությունը ավարտվել է հաջողությամբ: Բայագետից ուղարկված մեր գորքերի մոտենալու հետևանքով թուրքերը դադարեցնում են պաշարումը և հեռանում: Իհարկե, թուրքերի այդ նահանջում նաև Բաշկալեի ջոկատը որոշ օգուտ տվեց վանեցիներին՝ թույլ չտալով Դիլմանի մոտ Հալիլ բեյի ջախջախումից հետո, ինչպես վկայում են հավաստի աղբյուրները, օգնության գնալ Ջևղեթ բեյին:

Հայ հասարակական ղեկավար շրջանակների կողմից մի ամբողջ ամիս ստացվում էին տեղեկություններ Հայաստանում⁸⁷ սկսված կոտորածի, Վանի, Շատալիի և այլ վայրերի ինքնապաշտպանության մասին [ինչը] նյարդայնացնում էր հայ բնակչությանը և հատկապես թուրքահպատակ հայերին, որոնցից շատերը հարազատներ էին թողել ծննդավայրում: Եկող փախստականների պատմությունները լի էին սարսափելի մանրամասնություններով շատերի գոհվելու մասին: Ականատեսներն ասում էին, որ ուժ չկա նայելու կամավորներին, որոնք այդ տեղեկությունները ստանալիս լալիս էին ինչպես երեխաները: Կամավորները նյարդային վիճակում էին և ամբողջ ժամանակ անհամբեր սպասում էին մեր առաջնալուին: Այդ նույն ժամանակ, երբ 1915 թ. գարնանը Պարսկաստանում ընթանում էին մարտական գործողությունները, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ Հայկական դրուժինաները հավաքվել էին Երևանում և այդ քաղաքի շրջակայքում: Նրանք ավարտել էին իրենց համալրումը և անհամբեր նախապատրաստվում էին հարձակման: Որոշվել էր 2-րդ, 3-րդ, 4-րդ դրուժինաներից կազմավորել հայկական Արարատյան հատուկ ջոկատը⁸⁸, իսկ 5-րդ դրուժինայի անձնակազմը տեղավորել ջոկատի դրուժինաների միջև, մի մասը թողնել Երևանում⁸⁹: Ջոկատի պետ նշանակվեց 5-րդ դրուժինայի հրամանատար Վարդանը⁹⁰, նրա օգնական⁹¹ Խեչոն⁹², շտաբի պետ Ս. Արարատյանը⁹³ և մատակարարման՝ ճարտարագետ Կ. Համբարձումյանը⁹⁴:

87 Արևմտյան Հայաստանում:

88 Ջոկատը պաշտոնապես կազմավորվել է 1915 թ. ապրիլի 1-ին: Մարտակազմը 3120 հոգի էր, որոնցից 55-ը՝ հրամանատար, տեղ ԸԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 6:

89 Նկատի ունի պահեստային դրուժինան, որը կամավորներ էր վարժեցնում խմբերի համալրման համար: Հրամանատարն էր Նիկոլ Աղբալյանը:

90 **Մեհրաբյան Սարգիս** (Վարդան, Խանասորի Վարդան, 1870-1943), ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ: 1897 թ. Խանասորի արշավանքի ժամանակ հայդուկային ուժերի հրամանատար: 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Շուշիի հայ բնակչության ինքնապաշտպանության ղեկավար: Արարատյան գնդի հրամանատար:

91 Տեղակալ:

92 **Ամիրյան-Գևորգյան Խաչատուր** (Խեչո, Դաշնակցական Խեչո, 1868-1915), ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1897 թ. մասնակցել է Խանասորի արշավանքին և Իրանական հեղափոխությանը: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում 2-րդ դրուժինայի հրամանատարի տեղակալ, իսկ Արարատյան դրուժինայում՝ հեծյալ վաշտի հրամանատար: Ջոկվել է 1915 թ. հուլիսի 6-ին Դատվանի համար մղված մարտի ժամանակ:

93 **Արարատյան Սարգիս** (1884/1886-1943), հասարակական, քաղաքական և պետական գործիչ, ՀՅԴ անդամ: Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո ֆինանսների (1919-1920 թթ. նոյեմբեր), ՆԳ նախարար (1920 թ. սեպտեմբեր-նոյեմբեր):

94 **Համբարձումյան Կոստանդին** (Վասպուրականի Կոստի, 1882-1918), ազատագրական շարժման, քաղաքական ու պետական գործիչ, ՀՅԴ անդամ, մասնագիտությամբ գյուղատնտես: Մասնակցել է Աբդուլ Համիդ 2-րդի դեմ կատարված մահափորձին (1905) և Արցախի հայության ինքնապաշտպանությանը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ (1905-1906): Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ եղել է 4-րդ խմբի հրամանատարի համհարզ: Ընդգրկվել է Ա. Մանուկյանի նահանգապետության կազմում (1915 թ. մայիս-հուլիս): Արարատյան ջոկատում հանդիսացել է գունակի՝ թիկունքի պետ: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ղեկավարվել է Վանի օկրուգի կոմիսար, ապա հանդիսացել է Վասպուրականի հայկական իշխանության նշանակված հրամանատար (1918 թ. հունվարի 18-մարտի 21):

1915 թ. ապրիլի 12-ին Քանաքեռի մոտ դրուժինայի ստուգատես կատարեց պետ նշանակված Վարդանը: Ապրիլի 15-ի առավոտյան ջոկատը շարվեց Երևանի մոտ, որին ներկա էին զինվորական ու քաղաքացիական իշխանությունները, շրջակա գյուղերից եկող մի քանի հազար բնակչություն: Ուղղափառ, ինչպես նաև հայ գրի-գորյանական⁹⁵ հոգևորականության աղոթքներից և ջոկատի պետի, դրուժինաների հրամանատարների ճառերից հետ ճառեց քաղ. Երևանի պարետ, գեներալ-լեյտենանտ Կրիժևիչը⁹⁶: Նա հրաժեշտ տվեց իր ղեկավարության տակ երկար ժամանակ գտնված դրուժինիկներին, շնորհակալություն հայտնեց կարգուկանոնի, հաջող նախապատրաստության համար և ի սրտե հաջողություն մաղթեց մարտի դաշտում: Կամավորները, ինչպես նաև Երևանի բնակիչները սիրում ու հարգում էին գեներ. Կրիժևիչին հայերի նկատմամբ ունեցած ջերմ ու քաղաքավարի վերաբերմունքի համար:

Պարզված դրոշներով, նվազախմբի երաժշտության ու մի քանի հազար անբոխի հետ ջոկատը մտավ Էջմիածին: Էջմիածնում պատարագից հետո Ամենայն Հայոց կաթողիկոսը⁹⁷ իր օրհնությունը տվեց դրուժինիկներին: Ճանապարհի ողջ ընթացքում ջոկատին դիմավորում էին բնակիչների զանգվածները աղ ու հացով, եկեղեցական զանգերի դողանջներով ու բարի երթ մաղթելով: Ոչ պակաս հանդիսավորությամբ ջոկատին դիմավորեցին Իգդիրում (4-րդ կորպուսի հրամանատարի նստավայրը) Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներ. Օզանովսկու կողմից, որը կատարեց նրանց ստուգայցը: Արարատյան ջոկատը համալրեց գեներալ Նիկոլանի⁹⁸ Բայազետի ջոկատը:

Ապրիլի 23-ին ջոկատը դուրս եկավ Իգդիրից ու Չինգիլյան լեռնանցքով, Կրեյով, Կարաբուլախով, Արզանով, Ղըզըլ Դիգայով ուղղվեց Բայազետ, որտեղ միացավ գեներ. Նիկոլանի Բայազետի ջոկատին: Այդ ջոկատը բաղկացած էր Երևանյան սահմանապահ հետևակ գումարտակից (4 հետևակ հարյուրյակ և մեկ հեծյալ), հայկական 3 դրուժինաներից (2-րդ, 3-րդ և 4-րդ), 1 հեծյալ մարտկոցից, Թերեքյան գործի 3-րդ հերթի 2 գնդից:

Մի քանի օր անց ջոկատն ուղղվեց Աբաղա վայրը, ապա գլխավոր ուժերով Թափարիզի լեռնանցքով, որը պատված էր խոր ձյունով, չնայած որ գարուն էր, հատկապես ջոկատի համար ծանր էր շարժվել սկսած ձյունամրրիկի ու մերկասառույցի հետևանքով: Երբեմն զրկված լինելով սննդից, գիշերելով մինչև 20 աստիճան հասնող սառնամանիքի պայմաններում, դրուժինիկները⁹⁹ ապրիլի 26-ին իրենց առաջին մարտը մղեցին լեռներում, որոնք շրջապատում էին Գավրի Շամը (որտեղ 1914 թ. աշնանը վիրավորվել էր Դրոն), քանի որ մինչև գյուղ հասնելը անհրաժեշտ էր թուրքերին դուրս մղել շրջակայքի վրա գերիշխող բոլոր դիրքերից: Մեկը մյուսի ետևից գրավելով բարձրունքները, դրուժինաները երեկոյան մոտ ժամը 6-ին մտան Գավրի Շամ: Բայազետի ջոկատը փոխհրաձգությամբ մտավ Աբաղա, որի ողջ քուրդ բնակչությունը լքեց իր կացարանները սկսեց նահանջել համիդեականների պաշտպանության տակ: Լուրջ դիմադրություն ցույց տրվեց Սոուկ-սուի, Սոռի և գավառային քաղաք Բեգրի-կալեյի¹⁰⁰ մոտ: Այդ քաղաքից հետո ջոկատը թողնելով հիմնականում քրդերով բնակեցված տարածքը և այնուհետև շարժվելով

95 Առաքելական:

96 **Կրիժևիչ Իոսիֆ Իոսիֆի** (1853-?), ռուս զինվորական, գեներալ, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից, Երևանի պարետ (12.02.1915):

97 **Գևորգ Ե Սուրենյանց** (Տփղիսեցի, 1847-1930), Ամենայն Հայոց կաթողիկոս (1911-1930):

98 **Նիկոլան Անդրեյ Միլայիլի** (1858-1926), գեներալ-լեյտենանտ, Անդրկասպյան առանձին կազակային բրիգադի հրամանատար, Վան քաղաքի և շրջակա գավառների պարետ, կայազորի պետ (1915 թ. մայիս-հուլիս):

99 Արարատյան գնդի հրամանատար Վարդանը հուշագրում է. «Հիշում եմ մի սիրելի ուսանողի՝ Շաթիրյան Ռուբենին, որին ինչ պայմաններում էլ հարցնեի, թե ինչպես ես Ռուբեն, միշտ սիրալիք պատասխան կատանայի, թե լավ եմ: Այդտեղ էին հարուստներ Մելիքյանի, Դովլաթյանի, Աղամյանի և Հյուսիսային Կովկասցի Կրասիլնիկովի և ուրիշների որդիները», տես ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 90:

100 Բերկրի, Բերկրի-կալե:

հարավ, որը բացառապես բնակեցված էր հայ բնակչությամբ, սկսեց ավելի ու ավելի հաճախակի հանդիպել ավերածությունների և գազանությունների հետքերի, որոնք կատարել էին թուրքերն ու քրդերը հայերի նկատմամբ: Օրինակ՝ Կործոտ գյուղում ողջ բնակչությունը կոտորվել էր և դիակներն թափված էին հրապարակում, փողոցներում ու տներում:

Այնուհետև ջոկատը շարժվեց երեք գորայուներով: Հետագա մարտերից անհրաժեշտ է նշել Ջանիկի գրավումը, որի շնորհիվ, Լիմ կղզում¹⁰¹ ապաստանած ու թուրքերի երկամսյա պաշարմանը դիմագրաված 8000 փախստականներ փրկվեցին:

Մայիսի 4-ին, մեկամսյա պաշարումից ու հայկական դիրքերի վրա անհաջող գրոհից հետո Ջևդեթ փաշան տեղեկանալով հյուսիսից մեր գորքերի մոտենալու մասին, վերացրեց պաշարումը ու նահանջեց Բիթլիս: Թուրքերի նահանջից հետո հայերը գրավելով քաղաքը, գրեթե ամբողջությամբ հրդեհեցին քաղաքի թուրքական մասը, գորանոցները և հիվանդանոցը¹⁰²: Մայիսի 5-ին, կեսօրից հետո տեղի ունեցավ Արարատյան ջոկատի՝ Խեչոյի հեծելաջոկատի¹⁰³ հանդիսավոր մուտքը [Վան]: Նրան դիմավորում էր Արամը¹⁰⁴, իր օգնականների, 3000 զինված երիտասարդներ¹⁰⁵ ու քաղաքի բնակչությունը: Ծաղիկներ, բուսականություն, փողային նվագախմբի երաժշտություն և թուրքերից գրավված թնդանոթներից թնդանոթագույությունը լրացնում էին ողջ պատկերը: Հաջորդ օրը նման ընդունելության արժանացան Վարդանը, Քեռին ու Դրոն¹⁰⁶: Ցերեկը ժամը 3-ին ժամանեց Բայազետի ջոկատի պետ, գեներ. Նիկոլանը¹⁰⁷, որին Արամը հայ ժողովրդի անունից հանձնեց քաղաքի բանալիները¹⁰⁸: Բնակչությունը ջոկատին դիմավորեց խանդավառ ու սրտանց: Հրամանատարական կազմի համար կազմակերպվեցին անվերջ ճաշկերույթներ: Բնակիչներն իրենց ցնծությունը գլխավորապես արտահայտում էին անընդհատ հրաձգությամբ, որը մեծ դժվարությամբ դադարեցվեց:

Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Յուդենիչը Արամին նշանակեց Վանի ու նահանգի նահանգապետ¹⁰⁹, որից հետո նա ձեռնամուխ եղավ իր պարտականությունների կատարմանը: Վանի պաշտպանությունը ցույց տվեց, որ հայերը սուղ միջոցներով կարող են հակահարված հասցնել ուժեղ թշնամուն:

Քանի դեռ կատարվում էին Վանի իրադարձությունները, Բաշկալեի ջոկատն ավելի ստույգ տեղեկություններ ստանալով Հալիլ բեյի ջոկատի գտնվելու վայրի մասին,

101 Գտնվում է Վանա լճում:

102 Նշենք, որ շինությունների մի մասը հրդեհվել էր ինքնապաշտպանական մարտերի ընթացքում, քանի որ թուրք-քրդական ստորաբաժանումների կողմից վերածվել էր կրակակետերի:

103 Բերկիրում գեներալ Ա. Նիկոլանը տեղեկացնում է Վարդանին, որ ինքը առաջանալու հրաման չունի և դա այն դեպքում, երբ Վանի հայությունը վերջին ուժերն էր լարել թուրք-քրդական հարձակումներից պաշտպանվելու համար: Վարդանը և խմբի հրամանատարները՝ Դրոն, Քեռին և Համագասպը միաբերան որոշում են առանց ռուսական աջակցության շարունակել հարձակումը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 14, թ. 177: Վարդանի հրամանով յուրաքանչյուր խմբից առանձնացվում են 50-ական հեծյալներ, ընդհանուր թվով 150 հոգի, որոնց հրամանատար է նշանակվում Խեչոն: Հեծելավաշտը հանդիսանալու էր Արարատյան գնդի առաջապահը, որին հետևելու էին գնդի գլխավոր ուժերը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 1:

104 **Մանուկյան Արամ** (Հովհաննիսյան Սարգիս, Սերգեյ, 1879-1919), ազատագրական շարժման, քաղաքական ու պետական ակնավոր գործիչ, ՀՅԴ անդամ: Վանի ինքնապաշտպանության (1915 թ. ապրիլ–մայիս) փաստացի ղեկավար: Վանի և ազատագրված շրջանների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ): Երևանի դիկտատոր (1918 թ. մարտ): Մարդարապատի ձակատամարտի (1918 թ. մայիս) ապահովել է հայկական զորքի թիկունքը, որը վճռական նշանակություն է ունեցել թուրքական զորքի դեմ հաղթանակում: ՀՀ ՆԳ նախարար (1918 թ. հուլիսի 24):

105 Ինքնապաշտպանների թվաքանակը մոտ երկու անգամ քիչ էր, բացի այդ սակավ էր զենքն ու զինամթերքը: Արարատյան գնդի առաջացումը վճռական նշանակություն ունեցավ Վասպուրականի հայության փրկության գործում:

106 Այդ օրերին Համագասպի 3-րդ խումբը ծանր մարտեր էր մղում Կասիմ օղլի գյուղի մոտ, ուր կենտրոնացվել էին հակառակորդի զգալի ուժեր, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 32, թ. 46:

107 Գեներալ Ա. Նիկոլանն իր ջոկատով առաջացավ այն բանից հետո, երբ Արարատյան գունդը անցել էր շուրջ 40 կմ ու գրավել Ջանիկը:

108 Գեներալ Ա. Նիկոլանը խնդրում է, որպեսզի իրեն բերեն քաղաքի բանալիները, սակայն Վանի ամրոցը բանալիներ չունեց: Վարդանը վկայում է. «Արամն էլ մի քանի մեծ բանալիներ ժողովելով քաղաքացիներից... հանձնեց Նիկոլանին, նա էլ յուր հերթին այդ մի խումբ բանալիները որպես հաղթության նշան, ուղարկեց կովկասյան զինվորական իշխանությանը», տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 1 շրջ.-2:

109 1915 թ. մայիսի 7-ին:

առաջանում էր դեպի հակառակորդը ու տեղեկությունների համաձայն կատարում վերախմբավորումներ: Մայիսի 9-ին գլխավոր ուժերից առանձնացվեց ավելի ուժեղ և ինքնուրույն գնդապետ Նեմիովիչ-Դանչենկոյի Չուխյան ջոկատը՝ Կուբանյան 20-րդ պլաստունյան գումարտ., 2 լեռն. թնդանոթ, Թամանյան 3-րդ կազակ. գնդի 1/2 հարյուրյակ: Այդ ջոկատին հրամայված էր տեղակայվել Էլեսանից հյուսիս, ապահովելով առաջապահն ու գլխավոր ուժերը Չուխյան լեռնանցքի կողմից ու կապ պահպանել գնդապետ Սիլիկովի¹¹⁰ ջոկատի հետ Ամբակ գյուղի մոտ (համաձայն 5 վերստանոց քարտեզի¹¹¹) Բաշկալեից արևելք ու եթե հնարավոր է, նաև Դերիկի հետ:

Գնդապետ Սիլիկովի ջոկատը (8-րդ հրաձգ. գնդի 1 գումարտ., 4 գնդ., 2 լեռն. թնդ. և Կուբանյան կազակ. գնդի 3-րդ հերթի 1 հարյուրյակ) գեներ. Չեռնոզուբովի կողմից Չիրկալայով (քրդական շրջան) ուղարկվեց իմ ձախ թևը քրդական զինված հրոսակախմբերից պաշտպանելու համար: Բաշկալեի հեծյալ պարեկներից տեղեկություն ստացվեց հակառակորդի մասին, որ Կիշս-Լամկուրտ գյուղերի գծերի վրա նկատվել են խրամատներում գտնվող մոտ 2 թաբուրներ, իսկ այդ գծից հարավ ընկած գյուղերը գրավված են հակառակորդի կողմից և Կիշիսից հարավ-արևմուտքում գտնվող հովտում նկատվել է [հակառակորդի] մեծ գիշերակաց ու կարծես թե դիրքերում թնդանոթների փայլ: Այս տեղեկությունների հիման վրա [մայիսի] 10-ին Բաշկալեի ջոկատը տեղափոխվեց Խերեկ-Վազ գյուղերի գծի վրա (մոտ 3 վերստ արևմուտք): Հետագա հետախուզությունը պարզեց, որ հակառակորդն իրապես զբաղեցնում է այդ վայրերը շրջապատելով Բերնովալ-Սուֆյա գյուղերի աջ թևը և ձախ թևը հասցնելով մինչև Ռեքան: Մենգյուլյու-Մոլյակ լեռան և Սիադա Քարշի լեռան բարձրունքներին նմանապես անրացվում են դիրքերը: Այս տվյալների հիման վրա ջոկատն ուղղվեց գիշերակացի՝ առաջապահը Քյազիրիսան գյուղի մոտ՝ նրան հրամայելով պաշտպանել գլխավոր ուժերին և գրավել Բաշկալեից հարավ-արևելք դուրս եկող մեծ ճանապարհը, ու հատուկ ուշադրություն դարձնել հարավից ու հարավ արևմուտքից Բաշկալե տանող ճանապարհներին: Գլխավոր ուժերին հրամայվեց գիշերակացի կանգնել Խերեկ գյուղում՝ միջոցներ ձեռնարկելով պահպանության մասին: Մարտի դեպքում դիրքավորվել գիշերակացից հարավ: Տազանապի դեպքում կերթապահ զորամասը դիրքեր է գրավելու գիշերակացից հարավ-արևմուտք գտնվող գա-պաթին: Բազ գյուղում տեղակայել հեծյալ ուղեկալ՝ Ալբեկ-սուի հովիտը դիրքավորելու համար: Այդ օրը մեզ հայտնեցին, որ Իտալիան պատերազմ է հայտարարել Ավստրիային: Ուրախությունը համընդհանուր էր, քանի որ ենթադրում էինք, որ նման զգալի ուժերի համալրման դեպքում պատերազմն ավելի շուտափույթ կավարտվի:

Հենց նույն օրը ստացա գեներ. Չեռնոզուբովի հեռագիրը, որում տեղեկացվում էր, որ ինքը հակառակորդի թիկունք՝ Դիզ-Գեվերայանով ուղարկել է գեներ. Մուդրիի ջոկատը (կազմված էր 5-րդ հրաձգ. գնդի 2 գումարտ., Կուբանյան պլաստունյան 22-րդ ու 23 գումարտակներից, լեռնային մարտկոցից ու կազակներից): Ինձ հրամայված էր գրոհել ու ջախջախել հակառակորդին: Ես գեկուցեցի, որ հակառակորդի կողմից զբաղեցրած դիրքերը շատ ուժեղ են և ձակատից գրեթե անմատչելի և, որ

110 Սիլիկով Մոիսեյ Բաբայի (Սիլիկյան Մովսես, 1862-1937), ազգությամբ ուտի, ռուսական բանակի գնդապետ (06.12.1910), գեներալ-մայոր (22.08.1917), ՀՀ բանակի գեներալ-լեյտենանտ (01.06.1919): Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական ռազմաճակատում Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի Կովկասյան 8-րդ, ապա 6-րդ հրաձգային գնդերի հրամանատար: Էրզրումի ժամանակավոր պարետ (03.02.1916), Վանի ջոկատի (հոկտեմբեր 1917), Հայկական 2-րդ դիվիզիայի հրամանատար (հունվար 1918): Մարդարապատի ձակառամարտի ժամանակ (մայիս 1918) ղեկավարել է Երևանյան ջոկատը և ջախջախել Երևան արշավող օսմանյան զորքին: Նոր Բայազետի զինվորական նահանգապետ (1920): Խորհրդային տարիներին ենթարկվել է բռնաճնշումների՝ մի քանի անգամ անհիմն կերպով ձերբակալվել է: 1937 թ. նոյեմբերի 16-ին ձերբակալվել է ՀՍՍՀ ՆԳժ կոմիսարիատի Եռյակի որոշմամբ դատապարտվել է գնդակահարության, որն ի կատար է ածվել նոյեմբերի 22-ին: Հետմահու արդարացվել է:

111 Կովկասյան բանակի թիկունքի պետ, գեներալ Ե. Մալովսկու հուշերի համաձայն, պատերազմի սկզբում ռուսներին ծաղողվում է թուրքերից գրավել գերմանացի քարտեզագիրների կողմից կազմված ռուս-թուրքական ռազմաքերի նորագույն քարտեզներ, որոնք շտապ թարգմանվում են ռուսերեն և ուղարկվում գործող բանակի բոլոր զորամասերը: Հրամանատարները հիմնականում օգտագործում էին այդ քարտեզները, որոնցում ավելի ստույգ ու մանրամասն էր պատկերված տեղանքը, քան **Масловский. Е. В.,** Мировая война на Кавказском фронте, էջ 47:

հաջողության համար՝ երկու թևերը շրջանցելու համար, անհրաժեշտ են ավելի զգալի ուժեր, քան թե կա իմ տրամադրության տակ:

Զարմանալի էր այն, որ Դիլմանի ճակատամարտից հետո, երբ հակառակորդը նահանջել էր լեռները, կորպուսի հրամանատարը կարգադրել էր պլաստունների ժամանումով ջախջախել հակառակորդին, գեներ. Չեռնոզուբովը որևէ վճռական միջոցի չդիմեց, իսկ, իմիջիայուց, ուժերը նշանակալից էին (Կովկասյան 5-րդ և 6-րդ հրաձգ. գնդերը, 7-րդ գնդի 2 գումարտ., 8-րդ հրաձգ. գնդի 1 գումարտ., Հայկական դրուժինան, Պլաստունյան բրիգադը, 2 լեռն. մարտկոց ու 2 կազ. գունդ), իսկ այժմ, իմ ուժերը կազմված էին 6-րդ հրաձգ. գնդի 3 գումարտ., 7-րդ հրաձգ. գնդի 2 գումարտ., 8-րդ հրաձգ. գնդի 1 գումարտ., պլաստունյան 2 գումարտակներից, Հայկական դրուժինայից, 2 լեռն. մարտկոցներից և կազակների 9 հարյուրյակներից, ընդ որում այդ զորամասերից ոչ բոլորը կարելի էր օգտագործել, քանի որ մի մասը պաշտպանում էր Չուխյան լեռնանցքից թիկունքը և թևը: Եվ ահա այժմ այսպիսի ուժերով նա պահանջում էր ինձնից ակտիվ գործողություններ ու հաղորդում էր, որ կորպուսի հրամանատարը գոհ չէ իմ դանդաղ գործողություններից: Ես խնդրեցի գեներ. Չեռնոզուբովին, որպեսզի կորպուսի հրամանատարին ներկայացնի իմ զեկուցագրերի պատճենները, որպեսզի խուսափենք ցանկացած թյուրիմացությունից: Եթե իմ փաստարկները նա կհամարի ոչ հիմնավոր ու ի վերջո կհրամայի գրոհել, ապա ես, իհարկե, այդ հրամանը պարտավոր եմ անհապաղ կատարել, սակայն այդ դեպքում ես ինձնից հանում եմ ամեն տեսակի պատասխանատվությունը այդ գործողության ելքի համար: Այդ հեռագրից հետո ես ստացա նորը, որով տեղեկացվում էր, որ կորպուսի հրամանատարը [մայիսի] 12-ին ուղարկում է օդանավ հակառակորդի դիրքերը հետախուզելու համար:

Մայիսի 11-ին կատարվեց ուժեղացված հետախուզություն, որի ընթացքում պարզվեց, որ հակառակորդը զբաղեցնում է Մենգելյու-Լյուլյան լեռնաշղթայի հյուսիսային լանջերը և Սիլյախ-Կիրի հյուսիս-արևմտյան լանջերը: Նրա դիրքերն ուժեղացվել էին մի հարկաշարք խրամատներով, սակայն չհաջողվեց հստակ պարզել թևերը:

Ֆոնա Իվանի Նազարբեկով [ստորագրություն]
ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 1-61: Բնագիր: Ձեռագիր:

Summary

THE UNPRINTED MEMOIRS OF TOVMAS NAZARBEKYAN

Military activities in Caucasus front since July, 1914 up to April 26, 1916

Copy-book 2: since January 1, 1915 up to May 12, 1915

Ruben O. Sahakyan

Key words – Tovmas Nazarbekyan, Khoy, F. Chernozubov, Hakob Zavriyan, St. Bartholomew monastery, Derik, Dilman, Mukhanjik, Yerevan, Igdir, Smbat Boroyan, Andranik, Abdurrezak, Hakob Choloyan, Van, Shatakh, Armenian governorship of Van, Ishkhan, Aram, Vardan, Dro, Hamazasp, Berkri.

In the second copy-book of memoirs by general T. Nazarbekyan the military activities that took place since January 1 up to May 12, 1915 are described. From this part of memoirs of the general three main events can be distinguished: 1. the battle of Dilman, 2. the formation of the Ararat regiment and 3. self-defense

of Van and the foundation of governorate.

During Dilman battle that took place on April 16 up to April 18, 1915 general T. Nazarbekyan took brilliant victory over Turkish–Kurdish prevailing forces saving the territory of the viceroy of Caucasus from Turkish invasion. It can be stated without exaggeration that the battle of Dilman in its significance is equal to the battle of Sarighamish. It's not a coincidence that general T. Nazarbekyan was granted St. Georgi's 4th level award and the French medal "Médaille militaire", which is less known to the public.

During the battle the Armenian 1 voluntary group headed by Andranik that was carrying out the defense of one of the important defending positions was distinguished.

In his memoirs the general underlines the formation of the Armenian 5th or Ararat regiment that included the 2nd, 3rd and 4th groups. Due to self-sacrifice of the Armenian volunteers it became possible to help the Armenians in Vaspurakan.

T. Nazarbekyan gives rather detailed information about the reasons and proceedings of the self-defense of the Armenians of Van during April–May of 1915, as well as about the formation of Armenian governorate. He proudly states that the Armenians not having enough forces managed to confront the Turkish–Kurdish forces. The general believed that the guarantee of the victory was the resistance of the Armenian blocks of Van, namely, Aygestan and Kaghakamej, as well as, of the Armenians of the province of Shatak.

Резюме

НЕИЗДАННЫЕ ВОСПОМИНАНИЯ ТОВМАСА НАЗАРБЕКЯНА

Военные действия на Кавказском фронте с июля 1914 г.
по 26 апреля 1916 г.

Тетрадь 2: С 1 января 1915 г. по 12 мая 1915 г.

Рубен О. Саакян

Ключевые слова – Товмас Назарбекян, Хой, Ф. Чернозубов, Акоп Завриян, монастырь Св. Варфоломея, Дерик, Дилман, Муханджик, Ереван, Игдир, Смбат Бороян, Андраник, Абдурезак, Акоп Чолоян, Ван, Шатах, армянское губернаторство Вана, Ишхан, Арам, Вардан, Дро, Амазасп, Беркри.

Во 2-ой тетради воспоминаний генерала Т. Назарбекяна описываются военные действия, происшедшие с 1 января по 12 мая 1915 г. Из этой части воспоминаний полководца можно выделить три главные события: 1. Дилиманское сражение; 2. формирование Араратского полка; 3. самооборона Вана и основание губернаторства.

Т. Назарбемян, руководивший Дилиманским сражением, которое произошло 16–18-го апреля 1915 г., одержал блестящую победу над превосходящими турецко–курдскими силами, избавив территорию Кавказского наместничества от опасности турецкого вторжения. Без преувеличений можно утверждать, что по своему значению Дилиманское сражение было равноценно Сарыкамышскому сражению. Не случайно, что генерал Т. Назарбемян был награжден орденом Св. Георгия 4-ой степени и малоизвестной общест-венности французской медалью «Médaille militaire».

В сражении отличился 1-ый армянский добровольческий отряд под командованием Андраника, осуществляющий защиту одной из важных оборонительных позиций.

В своих воспоминаниях генерал выделяет факт формирования 5-го Армянского, или Араратского полка, в который входили 2-ой, 3-ий и 4-ый отряды. Благодаря самоотверженности армянских добровольцев становится возможным прийти на помощь армянам Васпуракана.

Т. Назарбемян передает довольно подробные сведения о причинах и ходе самообороны армян Вана в апреле–мае 1915 г., а также о формировании армянского губернаторства. Он с гордостью утверждает, что армяне, не владея достаточным количеством сил, сумели дать достойный отпор турецко–курдским силам. Залогом их победы генерал считает сопротивление двух армянских кварталов Вана – Айгестана и Кахакамеджа, и армян провинции Шатах.

REFERENCES

1. **A-Do**, Mec depqerə Vaspurakanum 1914-1915 tvakannerin, Erevan, “Luys”, 1917. **(In Armenian)**
2. **A-Do**, Im hishoghutjunnerə: Aracabanə ev canotagrutyunnerə Ruben Gasparyani ev Ruben Sahakyani, Erevan, AZ “Vardan Mkrtchyan” tpagratun, 2015. **(In Armenian)**
3. **Bajburdyan V.**, Qrderə, hayerə ev haj-qrdakan haraberutjunnerə patmutjan lujsi nerqo, Erevan, HH GAA “Gitutyun”, 2008. **(In Armenian)**
4. **Basencyan A. G.**, Hayeri kotoracnerə Bitlisi nahangum osmanjan banaki ev ajl zinvorakan kazmavorumneri koghmic (1915 t.), HH GAA Lraber hasarakakan gitutyunneri, 2018, N 1. **(In Armenian)**
5. **Hovsepyan H.**, Gharadaghi hayerə. Azgagrutyun, h. I, Ye'r, HH GAA “Gitutyun”, 2009 **(In Armenian)**
6. **Korsun N. G.**, Alashkertsкая i Xamadanskaya operazii na Kavkazskom fronte mirovoj vojny v 1915 godu, Moskva, 1940. **(In Russian)**
7. **Korsun N.**, Sarikamishskaja operacija na Kawkazskom fronte mirowoj vojny 1914-1915 gg., Moskva, Gosudarstvennoe voennoe izdatelstvo Narkomata oboroni, 1937. **(In Russian)**
8. **Korsun N.**, Alashkertsкая I Xamadanskaja opercii na Kawkazskom fronte mirowoj vojny 1915 g., Moskva, Gosudarstvennoe voennoe izdatelstvo Narkomata oboroni, 1940, Prilozenie 4. **(In Russian)**
9. **Krasnij arkhiv**. Istoricheskij zurnal. Tom tretij, Moskva-Petrograd, 1923. **(In Russian)**.
10. **Maslovskij E. V.**, Mirovaja vojna na Kavkazskom fronte 1914-1917 gg., Parizh, 1933 **(In Russian)**.

11. **Melkonyan A.**, Ush'agrav ash'xatutyun. Fjodor Elisev, "Kazaknerə Kovkasyan chakatum" (graxosutyjun), Banber Hayastani arxivneri, 2004, N 1 (**In Armenian**)
12. **Pipija G. V.**, Germanskij imperializm və Zakavkazje v 1910-1918 gg., M., 1978 (**In Russian**)
13. **Sahakyan R.**, Arajin hamashxarhajin paterazmi rus-turqakan razmachakatum rusakan zorqeri koxmic gravvac Arevmtyan Hayastanum general-nahangapetutyun himnman patmutjunic, Banber Hayastani arxivneri, 2014, N 1 (**In Armenian**)
14. **Sahakjan R.**, Otchjot professora V. V. Sapoznikova o predvaritellnom issledovanii nekotorix rajonov Zapadnoj Armenii, zavoevannikh russkimi vojskami vo vremja Pervoj mirowoj wojni, "Patmabanasirakan handes, 2014, N 1 (**In Russian**)
15. **Sahakyan R.**, Pastatxter Jakov Zavrievi antip arxivic, "Patma-banasirakan handes", 2011, N 2 (**In Armenian**)
16. **Sahakyan R.**, Haykakan kamavorakan khmberi gorcuneutjan patmutjunic, Banber Hayastani arxivneri, 2008, N 1 (**In Armenian**)
17. **Sahakyan R.**, Rusakan banaki hajkakan ev qrdakan jokatnerə Arachin hamashxarhajin paterazmi tarinerin, Banber Hayastani arxivneri, 2010, N 1 (**In Russian**)
18. **Sahakyan R. O.**, Arevmtahayut'jan ceg'haspanutyunə yev' inqapashtpanakan krivnerə 1915 t'vakandin, HH GAA "Gitut'yun", Ye'r, 2005 (**In Armenian**)
19. **Sahakyan R.**, A-Doyi husherə Osmanyanyan mejlisi patgamavor Arsh'ak Vramyani spanut'yan masin, Banber Hayastani arxivneri, 2017, N 125 (**In Armenian**)
20. **Sahakyan R.**, Rol generala T. Nazarbekjana v bitve pod Dilmanom 1915 goda. (Po arxivnim materialam), Istoriko-filologicheskij zurnal, 2016, N 2 (**In Russian**)
21. **Simonyan Hr.**, Zoravar Andranik (əndhanur bnutagrakan), Patma-banasirakan handes, 2000, N 1 (**In Armenian**)